


Մ. ԿԱՊՑԻՆԵԼ, Ա. ԶԱՐԵՑԿԻ

# ԿԻՏՐՈՆԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



8 DEC 2017

ՀԱՅՀ ՀՈՂՓՈՂԿԱՐԱՏ - ԱՅԳԵԳՈՐԾՎԿԱՆ ՎԵՐՉՈՒԹՅՈՒՆ

634.3

Մ. ԿԱՊՑԻՆԵԼ, Ա. ԶԱՐԵՑԿԻ

ԿԻՏՏՈՆԻ  
ՍԵՆԵԿԱՅԻՆ  
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցիտրուսային բույսերի խմբին են պատկանում կիտրոնը (լիմոնը), նարինջը, մանդարինը, գրեյպֆրուտը, կինկանը: Այդ բույր բույսերն արևադարձային և մերձարևադարձային ծագություններ: Աշխարհում համարյա չկա մի յերկիր, վորի բնակիչները վորպես սնունդ գործածելիս չինչեցին ցիտրուսային բույսերի քարձրարժեք և ոգտակար պտուղները: Ցիտրուսային բույսերը մարդու համար արժեքավոր են վոչ միայն նրանով, վոր նրանք չափազանց սննդարար են, այլև նրանով, վոր նրանք պարունակում են հատուկ նյութեր, վորոնք կոչվում են վիտամիններ: Վերջին ժամանակներս ապացուցված ե, վոր կան վիտամինների մի քանի տեսակներ, վորոնցից յուրաքանչյուրը մարդու որդանիքմի համար յուրահատուկ նշանակություն ունի: Վիտամինների զանազան տեսակները նշանակվում են A, B, C, D և այլն լատինական տառերով:

Մարդու սննդի մեջ վորեւե վիտամինի բացակայությունը խանգարում է մարդկային որդանիքմի նորմալ գործունեյությունը և առաջացնում այս կամ այն հիվանդությունը. որինակ՝ սննդի մեջ A վիտամինի բացակայությունը կամ անբավարար քանակութացնում ե աչքի, ատամի և վուկրի հիվանդություն. B վիտամինի բացակայությունը՝ ներվային համակարգության զանազան հիվանդություններ, C վիտամինի պակասությունը՝ ցինուզ հիվանդությունը: Շնորհիվ C վիտամինի այդպիսի հատկության, այն հաճախ անվանում են հակացինդային վիտամին:

Ցիտրուսային պտուղներն աչքի յեն ընկնում C վիտամինի չափազանց մեծ պարունակությամբ, վորի հետևանքով և նրանք շատ արժեքավոր են մարդկային սննդի համար:

Ցիտրուսային պտուղները մեծ նշանակություն ունեն նաև ստամոքսի զանազան հիվանդությունների ժամանակ վորտեսակետային մթերքներ:

Պտուղներն արժեքավոր հումույթ են նույնակես կռներին:



11-26968 9/4

Մ. Կապուև, Ա. Զարեցի  
Կամնատնա կուլտуրա  
լիմոնա

Սելչօցիս, Երևան, 1937 թ.

և հրուշակենի արդյունաբերության համար: Նրանցից պատրաստում են պահածո հյութեր և կոնցենտրատոններ, վորոնք զանազան բևեռային արշավախմբերի համար անհրաժեշտ են վորպես հակացինդացին միջոցներ: Նրանցից պատրաստում են նաև զովացուցիչ ըմպելիքներ, ցուկատներ, մուրաբաներ, մարմելադներ, ժեմներ և այլն:

Բացի բույսեց, ցիտրուսային բույսերը մեծ նշանակություն ունեն արդյունաբերության համար: Բույսի համարյա բոլոր մասերը կարող են ոգտագործվել վերամշակության համար, վորովինետև նրանք մեծ քանակությամբ յեթերային յուղ են պարունակում: Տերեներից, ծաղկներից և պտղի կճեպից ստացվող յեթերային յուղը մեծ չափով ոգտագործվում պարբյումերիայի արդյունաբերության մեջ:

Նույնիսկ բույսի բնափայտը, վոր մեծ ամրություն ունի, լայնորեն ոգտագործվում է զանազան հիուսնային պարագաների համար:

Այս ինչու ցիտրուսային բույսերի մշակության դարձացումը և ԱՀՄ-ում ունի խոշոր ժողովրդատնտեսական նշանակություն: Այս ինչու կառավարությունը և կուսակցությունը ցիտրուսային բույսերի դարձացման գործին բացառիկ մեծ ուշադրություն են դարձնում:

Ինչպես արդեն ասված է, բոլոր ցիտրուսային բույսերն արևագարձային և մերձարևագարձային ծագում ունեն, դրա համար ել աչքի յեն ընկուռ համեմատաբար ցածր ցրտադիմացկունությամբ և բացությա պայմաններում կարող են աճել միաժամ, այսպես կոչված՝ մերձարևագարձային շրջաններում, այսինքն՝ այնպիսի շրջաններում, վորտեղ համարյա սառնամանիքներ չեն լինում, կամ թե սառնամանիքներն այնքան թույլ են լինում, վոր ցիտրուսային բույսերի դարձացման վրա վեասկար աղղիցություն չեն դորժում:

Բազմամյա դիտողություններով ապացուցված է, վոր առանձին ցիտրուսային բույսեր մեծ չափով տուժում են, կամ բույսովին փշանում հետևյալ ջերմաստիճանների գեղքում՝

Կիսկաններ	8—9 աստ.	սառնամանիքի գեղքում
Մանղարիններ	7—8	»
Նարինջներ	6—7	»
Գրեյպֆրուտներ	6—7	»
Ցիտրոններ	5—6	»
Կիտրոններ (լիմոն)	5—5	»

Այսպիսով ցիտրուսային կուլտուրաները կարող են լավ աճել այն շրջաններում, վորտեղ նման սառնամանիքներ չեն լինում: Մեզ մոտ հԱՀՄ-ում հատկապես կովկասում, կան այդպիսի շրջաններ, որանք Աև ծովի մերձափնտա շրջաններն են: Սովոր մինչև Բաթումի: Այստեղ ցիտրուսային բույսերը լավ աճում և պտղաբերում են: Նրանց տարածությունն այդ շրջաններում տարեցտարի ավելանում ե:

Այսպես, ցիտրուսային կուլտուրաների ընդհանուր տարածությունը Աև ծովի մերձափնյա շրջաններում մինչ հեղափոխությունը կազմում եր մոտ 400 հեկտար, ներկայում 3000 հեկտարից ավելի յի. Խակ 1940 թվին այդ կուլտուրաների տարածությունը հասնելու յե մինչև 20000 հեկտարի:

Սակայն այդ տարածությունը գեռես բավական չե, վորովին լիովին բավարարի Միության աշխատավորների՝ այդ արժեքավոր պտուղների նկատմամբ յեղած պահանջը: Աւստի, նշված շրջաններում ցիտրուսային կուլտուրաները դաշտային պայմաններում զարգացնելուն զուգընթաց, լայն կերպով պարագաների ցիտրուսների մշակությունը հարավային շրջաններում հատուկ շենքերում և ջերմատներում, և կիտրոնի (լիմոնի) մշակությունը սենյակում անխտիր, Միության բոլոր շրջաններում:

Հյուսիսային շրջաններում կիտրոնը սենյակի պայմաններում մշակելու լիովին հարավորության լավագույն որինակ է հանդիսանում Գորկու յերկրամասի Ոկա գետի վրա Պավուլովագրը, վորտեղ չնայած սառնամանիքները հասնում են 40,6 աստիճանի, այնուամենայնիվ կիտրոսակառներում աճում և պատրահերում և 2000-ից ավելի կիտրոնի ծառ, ըստվորում կիտրոնի մշակությամբ զբաղվում են ավելի քան 50 տարի:

Առանձնապես հիշատակության արժանի յե Ադրբեյջանի Նուխի քաղաքի ընակիչ Հաքիմ Բաբա Մամեդովի փորձը: Այժմ նա տակառների մեջ ունի տարբեր հասակի մոտ 200 կիտրոնի ծառ: 1935 թ. նոյեմբերին նա քաղել եր 2200 հասած կիտրոն և դեռ ելի 500 հատ մնացել եր ծառերի վրա:

Մանեղովը յուր բոլոր կիտրոնները աեղավորում ե 200—300 քառ. մետր տարածություն ունեցող իր փոքրիկ պարտեզում, վորտեղ և շարում և կիտրոնի տակառները, իսկ ձմեռը փոխարում ե 35—40 քառ. մետր տարածություն և 2 լուսամուտ ունեցող սենյակ: Սառնամանիքները նուխիում հասնում են 20 և ավելի տարիճանի:

Մոսկվայի, Խարկովի և Մինչեւան այլ քաղաքների բազ-  
մաթիվ սիրողներ իրենց բնականները վոչ միայն զարգարել  
են գեղեցիկ մշտադալար ցիտրուսային բույսերով, այլև նրանցից  
պառազներ են ստանում:

Յիտրուսային կուտուրաները սենյակի պայմաններում ա-  
ճեցնելու տեխնիկան բարդ չե: Բայց լավ բերք ստանալու համար  
նրան պետք ե կատարելապես տիրապետել:

ՅԻՏՐՈՒՍԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ  
ՓՈՓՈԽԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սենյակի պայմաններում կարելի յեւ աճեցնել ամեն տեսակ  
ցիտրուսային բույս՝ կիտրոն, նարինջ, մանղարին, ցիտրոն, կին-  
կոն, գրեյպֆրուտ և այլն: Սակայն զրանք բոլորն ել լով վորակի  
բերք չեն տալիս: Որինակ՝ մանղարինի և նարինջի պառազները  
սովորաբար թթու յեն լինում, վորը և խիտ չափով իջեցնում  
և նրանց վորակը: Բայց յերեսոյթին (թեկուզ վերջնականապես  
գեղ ստուգված) նույն բանը տեղի ունի և գրեյպֆրուտների  
նկատմամբ: Իսկ կիտրոնների համար բարձր թթվությունը  
հանդիսանում է նրանց բնորոշ արժանիքը և առանձնահատկու-  
թյունը: Ընդհանրապես ցիտրոնը մշակվում է նրա հոտավետ հաստ  
կճեպի համար, վորից պատրաստում են մուրաբաներ, ցուկատներ  
և այլն: Թարմ վիճակում նրա միջուկն ուտելու համար պիտանի  
չե, զրա համար ել միջուկի վորակը նշանակություն չունի:

Այսպիսով, սենյակի պայմաններում աճեցներու համար ամե-  
նամեծ ուշագրության արժանի յեն կիտրոնը և ցիտրոնը, վո-  
րոնց պատրազներն իրենց համի վորակով յետ չեն մնում այն  
պատրազներից, վորոնք աճեցվում են հարավում, բացովյա պայ-  
մաններում, իսկ վորոշ գեղեցիում նույնիսկ գերազանցում են  
նրանց:

Սենեկային մշակության համար չափազանց մեծ հետաքըր-  
քըրություն են ներկայացնում նաև կինկանները: Դրանք մշտա-  
դալար բույսեր են. ծաղկում են աշնանը, պատրազները հասունա-  
նում են ձմռանը և վաղ գարնանը (հունվարից—մարտ) ու յեր-  
կոր ժամանակ մնում են ծառի վրա: Սովորաբար թփերն ամբող-  
ջովին ծածկված են լինում մանր վուկեգույն պատրազներով: Դրա-  
շնորհիվ կինկանները բարձր են գնահատվում նաև վորպես գե-  
կարառախիլ բույսեր: Պատրազները գործ են ածվում թե թարմ վի-

համար և թե վերամշակության համար (գլխավորապես մռաբառաների համար):

Դեկորատիվ նպատակների համար կարելի յէ ուղարկողձել նաև գառն պոմերանեցի, նարնջի, մանդարինի բոլոր պարտեզային տեսակները, վորոնց ծաղիկներն ունեն հիանալի բուրմունք և տալիս են գեղեցիկ պառզներ: Իսկ սենյակի պայմանակրում լավորակ պառզներ ստանալու համար կարելի յէ հանձնարարել միմիայն կիտրոնը, ցիտրոնը և կինկանը:

Անհրաժեշտ են կատի ունենալ վոր սենյակի պայմաններում՝ կուլտորաների բոլոր փոփոխականներն ել միատեսակ արդյունք չեն տալիս: Կիտրոնի բազմաթիվ փոփոխակներից միայն մի քանիսն են պիտանի սենյակում մշակելու համար: Եռայնը վերաբերում և ցիտրոններին և կինկաններին:

### ԿԻՑՐՈՒԻ ԼԱՎԱԴՈՒՅՆ ՍՈՐՑԵՐԸ

Պավլովյան.—Այդ սորտը հայտաբերվել է Պովլովո (Ռկա գետի վրա) քաղաքում: Յեղած տվյալներից կարելի յէ յենթակարեւ վոր այդ սորտն իտալական ծագում ունի: Սակայն նրա ծագումը և անունը ճշտորեն վորոշել հնարավոր չեն, ուստի և այն անվանում ենք Պավլովյան (Պավլովսկի):

Կիսատակառի մեջ բույսը հասնում է 100—110 սահամետ: Բարձրության՝ հաշված արմատավզիկից \*): Բույսը թփի ձեւ ունի տամնց փշերի: Տարվա ընթացքում ծաղկում է յերկու անգամ—կարնանը՝ մարտ—ապրիլ ամիսներին, աշնանը՝ հոկտեմբերին: Ծաղիկները խոշոր են, հոտավետ, պառուղները հասնում են նոցենրիցից սկսած մինչև մայիս: Պառուղները միջակ մեծության են՝ հոտավետ, հյութալի, գուրեկան թթու համով և շատ քիչ սերմով: Ակսում և պաղպահերել 2—3-րդ ամիսներին: Լավ բազմանում է կտրոններով (ճյուղի մասիրով): Լեռնային շրջանների համար լովազույն սորտը կարելի յէ համարել:

Կոր-աֆանյան (տեղական սորտ).—Խորհրդային մերձարեակարգային շրջաններում այժմ գա ամենատարածված սորտերից մեկն ե: Կիսատակառի մեջ բույսը հասնում է մինչև 2 մետր բարձրության: Պավլովյան կիտրոնից տարբերվում է



Նկ. 1. Պավլովյան կիտրոն

\*.) Արմատավզիկ կոչվում է այն տեղը, որ արմատը վերջանում է և զաղանը և սկսվում: Սովորաբար պաղպատու ծաների բարձրությանը չափվում է արմատավզիկից:

Նրանով, վոր սա աճում ե վոչ թե թփածե, այլ վորպես ծառ  
(բնածե):

Նոր-Աֆոնյան կիտրոնը փոփոխակների այն սորտին է՝  
պատկանում, վորոնք ծաղկում և պտղաբերում են ամբողջ տարին:  
Նրանց պտուղները յերկարագուն են, միջակ մեծության, թեթե-  
վակի խորտուբերտ տեղերով և բաց-զեղին գույնի: Միջուկը հո-  
տովետ ե, թթու գուրեկան համի. արմ քիչ ունի. շատ բերքա-  
տու յե: Աջարստանի պայմաններում տակառի միջ 10—12 տա-  
րիկան հասակում մի ծառը տալիս է մինչև 300 պտուղ: Սովո-  
րաբար բազմացվում ե պատվաստի միջոցով. պտղաբերում է  
պատվաստից հետո՝ 3—4-րդ տարին: Այս սորտի պակասությունը  
կայտնում է նրանում, վոր վայրի կիտրոնի վրա պատվաստելու  
գեղցում, սենյակի պայմաններում, յերբեմն ձմեռը տերևաթափ  
և լինում: Այս սորտն ուշադրության արժանի յե հարավային և  
մերձակաղաքաբային շրջանների համար, իսկ կտրոններով բար-  
ձացնելու գեպքում կարելի յե հանձնարարել նաև մյուս շրջան-  
ներին:

Խվրիկա (ամերիկյան սորտ).— Մեզ մոտ սենյակի պայման-  
ներում աճեցնելու համար մեծ նշանակություն չունի:

Լիսրոն (ամերիկյան սորտ).— Մեր պայմաններում դեռ ևս  
վերջնականապես ստուգված չե:

Ալիլաթրանկա (ամերիկյան սորտ).— Համարվում է ամենա-  
ցրագիմացկուն սորտերից մեկը. մեզ մոտ գեռ ևս բավարար,  
չափով փորձված չե:


Մեյերի կիտրոն.— Վորպես կիսատակառային կուլտուրա այս  
սորտն ունի համաշխարհային հռչակ: Այս սորտը դոկտոր Մեյերը  
փոփոխվել և Զինաստանից 1908 թվականին: Ամերիկայում փոր-  
ձարկվելուց հետո պարզվել ե, վոր նաև ամենացրագիմացկունն  
է, և զիմանում է մինչև 10,5 աստիճան սառնամանիքի, այսինչ  
կիտրոնի բազմաթիվ մյուս սորտերը 5—6° սառնամանիքից  
զունչանում են:

Մեյերի կիտրոնը հաջող բազմանում է կտրոններով և արմա-  
տակալման 2-րդ տարուց սկսում և պտղաբերել. այս սորտը շատ  
բերքատու յե և 4-րդ տարում մեկ բույսից կարելի յե ստանալ  
մինչև 100 պտուղ: Մեյերի կիտրոնն աչքի յե ընկնում իր զան-  
գաղ աճեցողությամբ, փշեր համարյա չունի, պտուղները խոշոր  
են՝ կլորավուն ձևի, իր հոտով նման և նարնջին. պտուղը դեղ-  
նա-նարնջագույն ե:



Նկ. 2. Մեյերի կիտրոն

— ՂՂ : Կ՞ Շաքիլ Աթումյան . ապիտառաչ տու դ ամսմատասի վկրիկից  
— ՂՂ : Ե Կամքագրասուց կանգիր մղեղի . վրամզ նպաստ դ ող մասով  
մաղենաստեն . պվատա ճեսմբա դ բամզատան լամսու եղի  
եւսան 021 պէտքը լողատա դ վ լ  
— ՂՂ Ապակ Բվուրան մարհութամշուն բանձեղի աւղիուր բամզատիսա  
պամտի « Պամբակ » . Յ . Կ.



մղեղու քախուսաւուն Բվմզակրտի Լղնե դ Լղմզ ուման Բվկամու<sup>ւ</sup>  
— ՂՂ մմղզամտփի դ բախմամաղզուց մսորը բամզացաւստան ուղ  
բախմախուն Բվմսու մմղուրան ասպի Բուղզանցու զեղտախ ուղբը  
աւստացաւմն դ ողեն պամզուր մղմ ասդմու մղամզմու ևտի ասմի  
վորած վենան ողմազտիուցիր ուն ամասն մաի Պղուր դ ժագի  
ուղակու մղու ետու իսրզում 02—Զ մմղուրան վզացաւստան մա  
պար դ մակատի Ամղուրան ուղ բախման Նզամսի բամզատի բամզակրտ  
ուղու լամտակ գումթամափան ուղր լուղպակի դ ժագեն  
— ՂՂ ասպի Բվմզամտաստի դ ժագեն մմղուրան ողեղբաւու բամզա  
— կամբու ևսնզա մղզամտաստի զակունզուաւու ևղենտապի Բվմզ  
— պացաւստան դ ժագեն մմղուրան կատ վզացաւստան ուղ քաի  
— մախուն մմղզախումտուր մու բամզաց ևսնզա յունասպազգենց  
ուղակումտպի բամզաթղզ ասոր վզացաւստան ամի  
վմգասթու բուկ վմզացունզու կատան լղնե դ լղնեմզի դ ժագեն  
Բվմզացաւստան մմղուրան ուղ բախմափ մմղուրարտուն դ մե  
— պատի վմզաժղարտուստ դ բամզասոր մմղի մմղուր մտրաչ ամի  
բամզացարտու վզացաւստուրմզ զվեցը վկամբզու զզիուտի ժղամզ  
մաի մղմսիուն ողեղբաւու դ ժագեն մմղուրայ լղու վլզմու վէ  
ժղմմզ ողեղենու մեզտ ժտառուցիր լղնե ուղ բատավնու մու  
— սմթամվարմզ վզամտավի իսլզու վիզտ վղատավնու մու

իվմմափի կատան քուն ասոր վզացաւստան բուկ ուղ զմզախումտաստ  
— պաշմղու վզացաւստան մեզտ իսլապայր ուղազնու դ մատրու մու  
— պաշմու բախմանզու լուղասսոր դ ժագեն ժղմմզ մմղուրտեզաչ  
եմու վես դ վարչու բանեն ուղ ժղմու օզր մմղուրան մասն աւամբ  
դ ողեղնզի մմղզամտաստուն զվիուստափն մաի Պղնկչ ճաստագիտ  
դ անգրամչու կատարուր աւղմախուստ բախմանզու մմղուրայ

## ԴԱՅՄԻՈՐՈՒ ՈՎԱՇՆՎ ԴԵՌՈՑՎՍՎ ՈՎՍԻՈԵՂԳՈ

մմղուստ վզամտի զամբուֆու  
— մաս դ պակախու ուղ քարիգումտատ տու բասումիխմնզը  
— իսմուզտ ովմտամտ իսու  
դ իսրմզու մրտի թակուդում նզմ բուկ վլզմու նպաստ  
— պա կանգիր մմղենաստ վզամտի զամբուֆու բակաման ուղբը  
իսու տու մաի դ բախմանզ նզմափ վմզամտամտ վզացաւստան ուամբ  
վիսնզու ամույ բակմու վզացաւմնու — պատպի զակունչու

— պամբամնուն օզր ու  
վակուրտ եմու ուղ քախմախու նպաստ իսրմզու

մաի « պակ մմղզամթականգամտ միզր Բվմզականգամտ դ բախմարտ  
իսկամտի վեստ աս մրտի թակուդուստ դ բախմապատպ դ պամտ  
քախմամտատպիր ամու — (կապափափ զակունչու) ցաքաւ  
— պամբամնուն օզր  
— վմ վմարմտ պամտ ում ամաստախ զամբուֆու ողեղմաի

Սենյակում, ձմեռվա ընթացքում, բույսերը վարժվում են անյակի պայմաններին (ջերմության, ողին), վորոնք զգալի չափով տարբերվում են բացովիյա պայմաններից. Նրանք ավելի քնքուշ կայուն են դառնում արտաքին պայմանների փոփոխությանը, մանավանդ ջերմության, ողի և արևի ազդեցությանը. ուստի այն պատուհանները, վորտեղ գտնվում են բույսերը, պետք ե բաց անել մեծ զգուշությամբ: Վոչ մի գեղքում չի կարելի պատուհանները բաց անել միանգամբ՝ յերկար ժամանակով: Առաջին որերը պետք ե բաց անել կես ժամով և մի ժամից վոչ ավելի, իսկ հետագա որերը հետզհետե ավելացնել այդ ժամանակամիջջոցը: Սովորաբար 6—8 որ բավական ե, վորպեսզի բույսերը վարժվեն թարմ ողին: Յեթե պատուհանները բացելու ժամանակ նկատվի, վոր բույսերն սկսում են խեղճանալ (տերենները թառամում, կախ են ընկնում), անհրաժեշտ ե պատուհաններն անմիջապես փակել: Սենյակում բույսերը մի քանի որ պահում են ծածկված պատուհաններով այնքան ժամանակ, մինչև վոր թառամելու նշանները վերանում են (յերբ տերեններն ավելի ճկունանում և ընդունում են նախկին դիրքը): Դրանից հետո նորից կարելի յե սկսել բույսը վարժեցնել թարմ ողին, բայց անհրաժեշտ այդ անել զգուշորեն, ավելի քան առաջին անգամ ոկղընական շրջանում պատուհանները բացելով վոչ թե կես ժամով, այլ 15 րոպեյով՝ հետզհետե ավելացնելով այդ ժամանակամիջջոցը, բայց վոչ այնպես արագ, ինչպես սովորաբար արվում ե:

## ԱՄԱՌԸ ԲԱՑՈՒՅՑԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒՅՍԵՐՆ ԻՆՉՐԵՍ ՊԱՀԵԼ

Առանց նախազգուշական միջոցների կիրառման, բույսերը տնամերձ պարտեղ, կամ վորևե բաց տեղ ուռւս բերել նույնպես չի կարելի: Այն տեղը, վորտեղ բույսերը զրկելու յեն, անպայման պետք ե պաշտպանված լինի ուժեղ քամիներից: Բույսերը բացովիյա պայմաններին և ուղղակի արևի լույսի ազդեցությանն անհրաժեշտ է վարժեցնել աստիճանաբար, հակառակ պարագայում տերենների ուժեղ այրվածքներ կարող են տեղի ունենար, իսկ վորոշ զեպքերում նույնիսկ բույսերի վոչնացում: Սկզբում բույսերը պետք ե դնել կիսաստվերում: Յեթե ստվերու տեղ չկա, կարելի յե այդպիսին պատրաստել: Դրա համար հարկավոր է հողի մեջ 3—4 ցից խրել և նրանց վրա փռել վորեն կտոր: 4—6

որ հետո բույսերը կարելի յե դնել ավելի բաց տեղ՝ տռաջին որը մտավորապես մեկ ժամով, իսկ յերկու—յերեք որից հետո այց ժամանակամիջոցն ավելացնել մեկ և մեկուկես ժամով: Յերբ բույսի զրսի պայմաններում պահելու տեղությունը կհասնի 6—8 ժամի, այն ժամանակ արդեն նրանց կարելի յե թողնել արել տակ ամբողջ որով: Նույնպես պետք ե նշել, վոր բույսերը քարաշեն շենքերի պատերին շատ մոտ չի կարելի դնել. այդպիսի պատերն որվա ընթացքում խիստ տաքանում են, վորից բույսերը կարող են տուժել վերը թված նախազգուշական միջոցները չկիրառելու հետևանքով վորոշ սիրողների պրակտիկ կյանքում շատ հաճախ լինում են այրվածների և նույնիսկ բույսերի վոչնացման գեղքեր: Շատ սիրողների մեջ ստեղծվել ե այն կարծիքը, վոր սենյակում աճեցվող ցիտրուսները վախենում են արեից: Նման կարծիքը միանգամայն սխալ ե. ընդհակառակը, ցիտրուսացին բույսերն արե սիրում են, վորովհետեւ նրանք տաք յերկրի բույսեր են:

Գարնանը բույսերը գիշերները պետք ե ներս տանել այնքան ժամանակ, մինչև վոր գիշերային տաքության ջերմաստիճանը 12—14 աստ. պակաս չլինի: Ամբողջ ամառվա ընթացքում բույսերը գիշեր ու ցերեկ կարելի յե թողնել դուրս: Աշնանը, յերը գիշերային ջերմությունը 12—14 աստիճանից կսկսի իջնել, գիշերները պետք ե բույսերը ներս տանել, իսկ յերը ցերեկիս տաքությունը 10—12 աստիճանից պետք կիջնի, այդ գեղքում բույսերն այլևս դուրս թողնել չի կարելի:


Յեթե լեռնային և կենտրոնական շրջանների պայմաններում ցիտրուսացին բույսերը յերկար ժամանակ պահվեն գուբար՝ 10 աստիճանից ցածր ջերմության տակ, կարող են տերենները թափել, վորը և վատ կանգրազառնա բույսի հետագա զարգացման վրա:

Այն շենքերում, վորտեղ ձմեռելու յեն ցիտրուսները, ջերմաստիճանը 0-ից չպետք ե իջնի, և ջերմաստիճանը բարձրանա 14—15-ից ավելի:

Զմեռը պահելու համար լավագույն ջերմաստիճանը 8—10° ե: Այդպիսի պայմաններ կարելի յե ստեղծել միայն լուսավոր, չտաքացվող միջանցքում կամ ապակեծածկ պատշգամբում: Պետք ե նկատի ունենար, վոր բույսի վրա խիստ վատ են ազդում ջերմաստիճանի սուր տառանումները:

ՅԵՏՐՈՒՄԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՔԵՐԸ ԻՆՎԵՆՏԱՐԸ ՅԵՎ ԱՄԱՆԵՂԵՆԸ

Յիտրուսային ըույսերի սենեկային մշակության համար ան-  
հրաժեշտ ինվենտարը հետվյալն ե՝ 1) ցնցուղ, 2) պուրպերիզատոր, 3)  
3) այգու մլրատ, 4) այգու դանակ:



#### **Ակ. 4. Ցնցուղ**

Բույսերը սրսկելու համար պետք է ոգտագործել պուլիկի-  
դատորներ, վորոնք ավելի հարմար են։ Պուլիկերիզատորները  
գործադրվում են նաև վաստակուների գեմ պայքարելու ժամա-  
նակ՝ թունավոր նյութեր  
սրսկելու համար, վերջին  
դեպքում սրսկելուց հետո  
պետք է նրանք ջրով լավ  
մաքրել:



## Եհ. 5. Ալգու մկրտառ

և ածում բույսերի հաստ ճյուղերը կարելու համար, վոր կարելի է ձեռք բերել բոյսը լերկաթեղննի խանութենիքում:

Բույսի ճարտիռա կառեւաւ համար շատ հաճախ պոսծ էն առ






Եկ. 6. Այլու դանակ

ծուժ այլու զանակներ. ճյուղերն այլու զանակով կտրելը գերազանցական ին այն պատճառով, վոր ստացվում են ամենի հարթ



կտրվածքներ, վորոնք հեշտ և արագ են առողջանում: Սակայն հաստ ճյուղերը դանակով կտրելը դժվար է, ուստի այդպիսի դեպքերում մկրատն ե գործածվում: Մկրատով կտրվածքն անպայման պետք է հարթել այդու դանակով:

Այժմ անցնենք ամանեղենի նկարագրությանը:



Նկ. 7. Կավե կառներով: Կիսատակառ- Նկ. 8. Փայտե քառան-  
ծաղկաման ները կարող են լինել կլոր— կյունի արկղ  
ակառածե և քառանկյունի—արկղածե: Կիսատակառի ձեր մեծ  
անակություն չունի: Կարեսոր և միայն, վոր նրա ներքեխ մասի  
յնությունը (հատակում) 4—5 սանտիմետրով պակաս լինի վե-  
րիի մասի լայնությունից: Կիսատակառի բարձրությունը և լայ-  
նությունը կախված ե բույսի և զլլսավորապես արմատների մե-  
ռությունից: Վորապես որինակ կարելի յե հանձնարարել ամանի  
տեղալ չափերը.

<b>Բույսերի հասակը</b>	<b>Ամանի յերկա- բությունը վե- րին մասում (սանտիմ.)</b>	<b>Մանոթություն</b>
<b>Արմատակալած կտրոն</b>	<b>8</b>	
<b>1 տարեկան</b>	<b>12</b>	<b>1. Ամանի չափը սովորաբար հաշվում են ըստ նրա վերին մասի լայնության:</b>
<b>2—3 տարեկան</b>	<b>16</b>	
<b>4—6 »</b>	<b>20</b>	<b>2. Սովորաբար ամանի բարձ- րությունը հավասար է լինում նրա վերին մասի լայնությանը:</b>
<b>7—8 »</b>	<b>24</b>	
<b>9—10 »</b>	<b>28</b>	
<b>11—15 »</b>	<b>32</b>	
<b>16—20 »</b>	<b>36</b>	
<b>20-ից բարձր</b>	<b>40—50</b>	



Նկ. 9. Կիսատակառ (կաղկա)

կամանի հողի թթվելուն։ Այդ իսկ պատճառով ել չի հանձնարարվում մետաղյա ամանեղին գործածել։

Բույսերը նոր կիսատակառների մեջ փոխազրելու ժամանակ պետք է հետեւ վորպեսզի կիսատակառները պատերին ձեղքեր չունենան, այլապես ջրելու ժամանակ նրանց արանքներով ջուրը կթափի։

## ԿԻՍԱՏԱԿԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Ցիտրուսային բույսերի կիսատակառային մշակության ժամանակ հատուկ նշանակություն ունի բույսերի սննդի ապահովման խնդիրը, ուստի և վճռական նշանակություն ունի հողի կաղմը։ Վոմանք այդ հարցին բավարար ուշագրություն չեն դարձնում ամեն պատահական հող վերցնում են և հետո զարմանում թե ինչու բույսը փչացավ։ Բազմաթիվ դեպքերում սենյակի բույսերը փչանում են սննդի պակասությունից, կամ ջրելու անսորմալ պայմաններից։

Պետք են նկատի ունենալ, վոր կիսատակառային մշակության համար պատրաստի հող համարյա թե չկա, համենայն

կիսատակառներն ավելի լավ են պատրաստել կազնու փայտից՝ յերկաթե ողակապերով։ Հատակի մասում պետք է լինի 3—4 հատ վոչ մեծ անցք՝ ավելարդ ջուրը դուրս հոսելու համար։ Ավելորդ ջրի հոսանքը հեշտացնելու, ինչպես նաև դեպի արմատներն ողի ազատ մուտքն ապահովելու համար կիսատակառները պետք են պատրաստել 3—4 վոտիկներով, կամ թե կիսատակառի հատակին խփել 2 ձողիկ, վորպեսզի նրա հատակը չդիպչի սենյակի հատակին, կամ պատուհանի ներքնատախտակին։

Վոչ մի դեպքում չի կարելի ծաղկամանները և կիսատակառները ներկել դա պակսեցնում և ողի հոսանքը դեպի արմատները և նպաստում ծաղկամանի հողի թթվելուն։ Այդ իսկ պատճառով ել չի հանձնարարվում մետաղյա ամանեղին գործածել։

Պետք այդպիսի հող դժվար են գտնել, դրա համար այդպիսի հողը պետք են պատրաստել մի քանի տեսակ հողից խառնուրդ կազմելով, վորպեսզի ստացվի լավ սննդարար հող։

Կիտրոնի կիսատակառային մշակության համար հողի լավագույն կաղմը հետևյալն են. մեկ մաս ճմահող, մեկ մաս անտառային բուսահող, մեկ մաս քայլքայված գոմազը, մեկ մաս դետի ավագ։ Առանձին դեպքերում (խոշոր բույսերի համար) այդ խառնուրդին կարելի յե ավելացնել խառնազը հող։

Հողի այդ տեսակների քանակական փոխարաբերությունը կարելի յե վորոշ չափով փոխել բայց այս դեպքում պետք են հետեւ, վորպեսզի հողը շատ պինդ և կպչուն չլինի։ Նա պետք ե լինի ծակոտկին և ջրի ու ողի համար միանդամայն թափանցիկ։

Ճմահողն ամենակարեղոր մասն են. Այն պետք են պատրաստել հետեւյալ ձեռվ. դաշտում ընտրում են մի հողամաս, ցանկալի յե թիթեռնածաղիկ բույսերով զբաղված (առվույտ, յերեքնուկ և այլն): Յեթե հողը պատրաստվելու յե այն ժամանակ, յերբ խոսքը բարձր ե, խոտը նախապես պետք ե հնձել։ Ընտրված հողամասից հարկավոր ե վերցնել հողի վերին շերտը, 10—15 սմ հաստությամբ և այդ հողը բահով շրջել վորպեսզի ձիմը լավ քայլքայվի։ 5—6 որ հետո, յերբ ձիմը մի փոքր կչորանա, պետք ե բահով խառնել՝ աշխատելով նրանք մանրացնել, հողն արմատներից թափ տալ և 15—20 որ հետո այդ հողը կարելի յե ոգտագործել։

Վոչ մի դեպքում չի կարելի կիսատակառայի մանր արմատները դեռ ցցել, քանի վոր նրանք ճմահողի ամենաղին կաղմում։

Անտուային բռւսահողը լավ են պատրաստել վաղ գարնանը՝ անտառում (բայց վոչ փշատերե անտառում): Հողը նույնպես պետք ե վերցնել բարակ շերտերով, թափված տերեների և կիսատակառայի մանր ճյուղերի հետ միատեղ։ Վորեւ բաց տեղ հավաքած հողից պետք ե կույտեր կաղմել և ամառվա ընթացքում նրանք մի քանի անգամ բահով խառնելով թայլքայման պրոցեսուն ուժեղացնելու համար կույտերը մի քանի անգամ պետք ե ջրել։ Սովորաբար աշնանն այդ հողն արգեն բավականաչափ պատրաստ ե լինում գործածության համար։ Անտուային բռւսահողը վորոշ չափով հանդիսանում են նաև վորպես պարարտանյութ։

Գումարդի փտահողը բույրովին քայլքայված գոմազըն և, վոր սե, պարաբար հողի տեսք ե ունենում։ Այդ հողը կարելի յե գտնել ճմահող թափած տեղերում։ Վերին թափած գոմազը պետք

և հեռացնել մինչեւ այն շերտը, ուր սկսվում է բոլորովին քայլաված միատեսակ, ճարպու, յուղու մասսան:

Ավելի լավ ե ոդտափորձել ձիու քայլայված աղբը:

**Սվագ.**— Անկախ նրանից թե ինչպես և պատրաստվել հողը, նրան միշտ պետք է ափազ ավելացնել: Լավ ափազը գետի ափազն է: Այդ ափազը գործածելուց առաջ ջրի մեջ պետք է մի քանի անգամ լվանալ, մանավանդ յեթե նրա մեջ նկատվում են ժանագութեալ բժիշկ:

Քաղաքի պայմաններում վերը նկարագրած ձեռվ հող պատրաստելը բավականին դժվար է, ուստի և պատրաստի հող պետք է ձեռք բերել բուսապատման տրեստներից, ծաղկանոցային անտեսություններից, ջերմատներից և այլն:

## ՑԻՏՐՈԽՍՅԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Թե կիտրոնը և թե մյուս ցիտրուսային բույսերը բազմացնում են սերմերով և կտրոններով (այսինքն՝ ճյուղերի մասերով). սենյակի պայմաններում ամենամեծ ուշադրությունը պետք է դարձնել 2-րդ միջոցի, այսինքն՝ կտրոններով բազմացնելու վրա: Սակայն դրա համար պետք է ունենալ պտղաբերող բույսեր, իսկ վոչ մերձարևադարձային շրջաններում այդպիսի բույսեր քիչ կան:

Ուստի առաջին հերթին նկարագրենք ավելի մատչելի՝ սերմերով բազմացման միջոցը:

**Բազմացումը սերմերով.**— Իրենց տներում կիտրոն աճեցնելու համար բազմացման այս միջոցը կարող են ոդտափորձել բոլոր սերողները՝ առանց բացառության բոլոր շրջաններում. դրա համար անհրաժեշտ ե միայն կիտրոն գնել նրա սերմերը հանել և ցանել: Սերմերը պետք է զգուշությամբ հանել վորպեսզի դանակով չկտրվին, ըստ վորում կիտրոնի միջուկը կարելի յե ոդտափորձել: Պետք է նկատի ունենալ վոր կիտրոնի՝ թեյի մեջ դցած սերմերը ցանելու համար անպետք են, վորովհետեւ տաք թեյը մեղքնում է սերմի սաղմը և նա ծրւնակությունը կորցնում է:

Ըստրած սերմերը լավ է ցանել մոտակա 3—4 որվա ընթացքում, վորովհետեւ յերկար պահելու գեպքում, մանավանդ տաք ու չոր տեղում, նրանք նույնպես կկորցնեն իրենց ծրւնակությունը:

Սերմերը պետք է ցանել հատուկ ծաղկամանների կամ փոքր արկղների մեջ (նայած սերմի քանակության): Ամանի մեջ պետք է հող լցնել վորի կազմը վերը ցույց ե տրված, և նրա մեջ

ցանել մեկ սանտիմետր խորությամբ՝ մեկ սերմը մյուսից 2—3 ոմ հեռավորության վրա: Սերմերը՝ արդեն աճող բույսեր ունեցող ծաղկամանների մեջ, ինչպես դա հաճախ կատարվում է, չի կարելի ցանել: Դա վնաս է թե ծաղկամանի մեջ աճող բույսին, և թե նոր մատաղ ծիլերին, քանի վոր նրանց նկատմամբ հնարավոր չե անհրաժեշտ խնամք տանելը Ծաղկամանի կամ արկղի մեջ ցանած սերմերն անհրաժեշտ ե հենց նույն ժամին առատուրեն ջրել դնել տաք տեղ և հետագայում ջրել ըստ կարիքի: Առանձնապես պետք է հետեւ վոր հողը չչորանա, բայց չափազանց շատ ջրելը նույնպես վտանգավոր է, վորովհետեւ սերմերը կարող են նեխել:

Սերմերի արագ և լավ աճման համար ամենաբարենպատշերմությունը 20—25 աստիճանն է:

Առաջին ծիլերը յերկալուց հետո անհրաժեշտ և ստեղծել այլ պայմանները, այսինքն՝ ավելի ցածր ջերմաստիճան և ավելի շատ լույս, վորի համար ամենից հարմարը նրանք պատուհաններում տեղավորելն է:

Յեթե աճող ծիլերը շարունակենք թողնել տաք և մութ տեղ, այս ժամանակ նրանք կակսեն շատ ուժեղ և անհավասար դեպի վեր աճել, վորի հետեւանքով կստացվեն շատ թույլ, ձգված բույսեր: Ծիլերի հետագա զարգացման համար արդեն բավական է 13—15 աստ. ջերմությունը: Այդ ջերմության դեպքում նրանք զգալիորեն զանդաղ կածեն, բայց զրա փոխարեն կստացվեն ավելի առողջ բույսեր՝ սերմնաբույսեր (սերմից աճեցրած յերիտասարդ բույսերը կոչվում են սերմնաբույսեր):

Յերբ աճող ծիլերը կունենան առաջին զույգ խլական տերեփսերը, նրանք հարկագոր և վերատնկել առանձին ամանների մեջ: Դրա համար պետք է վերցնել ամենափոքը՝ 6—8 ոմ չափի (վերի մասի լայնությունը) ծաղկամաններ և յուրաքանչյուր ծաղկամանի մեջ տնկել մեկական սերմնաբույս:

Դա կատարվում է հետեւյալ կերպ. աջ ձեռքը վերցնելով վերեւ սրածայր փայտ կամ դանակ՝ սերմանաբույսի մոռ խրում են հողի մեջ և զգուշությամբ բարձրացնում այն: Այդ նույն ժամանակ ձախ ձեռքով բռնելով՝ բույսն զգուշությամբ հանում են հողից: Ծաղկամանի մեջ անկերուց առաջ, սերմնաբույսի արմատը յեղունկով մի քիչ պետք է կարձացնել: Այդ արվում և նրա համար, վոր հետագայում ստացվեն ավելի լավ զարգացած փնջաձև արմատներ:

Սերմաբույսը հողի մեջ տնկելու ժամանակ ձախ ձեռքով պետք է պահել այնպիսի բարձրության վրա, վոր նա տնկվի  $\frac{1}{2}-1$  սմ ավելի խորը, քան յեղել և իր տեղում, իսկ աջ ձեռքով հողը նստեցնել արմատներին: Ծաղկամանի մեջ հողը մինչև բերանը չի կարելի լցնել, պետք ե մի քիչ տեղ թողնել (մոտավորապես  $1-1\frac{1}{2}$  սմ): Ճրելու համար: Յերբ սերմնաբույսը ծաղկամանի մեջ կդրվի և հող կլցվի, անհրաժեշտ ե ծաղկամանի յեղբերի հողը քիչ նստեցնել—պնդացնել: Տնկելուց հետո սերմնաբույսը հերն անմիջապես պետք ե լավ ջրել և դնել ավելի տաք ու լուսավոր տեղ, վորպեսզի նրանք արմատակալեն:

Սերմնաբույսերի հետագա խնամքը պետք ե լինի պարբերաբար ջրել և ըստ աճման չափի վերատնկել ավելի մեծ ծաղկամանների մեջ:

Սերմերից աճեցրած կիտրոնները շատ յերկար ժամանակ չեն պտղաբերում՝ յերեմի մինչև  $10-12$  տարեկան հասակութացից դրանից, վստահություն չկա, վոր այդ բույսերը լավ վորակի պտուղներ կտան: Շուտ բերք ստանալու և լավ վորակի պտուղ ստանալու համար անհրաժեշտ ե պատվաստել:

Պատվաստած սերմնաբույսերը պատվաստից  $2-3$  տարի հետո արդեն սկսում են պտղաբերել:

Պատվաստի ձեւեր շատ կան, սակայն նրանք բոլորը կարելի յե բաժանել յերկու խմբի. 1) պատվաստ մեկ բողբողով (աչքով), կամ, ինչպես անվանում են՝ աչքապատվաստ և 2) պատվաստ՝ կտրոնով կամ կտրոնապատվաստ (մատապատվաստ):

Մենք կսահմանափակինք ամենատարածված և պարզ միշտով պատվաստի կամ աչքապատվաստի նկարագրությամբ: Այս ձեւն այնքան հեշտ ե, վոր ցանկության դեպքում յուրաքանչյուր պիրող շատ շուտով կարող ե տիրապետել դրան:

Նախառաջ պետք ե վորոշել թե աչքապատվաստի համար աչքեր \*) ունեցող կտրոններ վորտեղից վերցնել:

Կտրոնը պետք ե վերցնել լավ սորտի պտղաբերող կիտրոնի բույսից:

Յեթե ծանոթների մոտ այդ նպատակի համար համապա-

\*) Այդեպության մեջ աչքապատվաստի համար պատրաստած հյուր բողբոշներով—աչքերով կոչվում ե կտրոն: Աչքեր կոչվում են այն բողբոշներ, վորոնք գտնվում են տերեւակոթի մոտ:

տասխան բույս չգտնվի, ապա կտրոնները պետք ե ստանալ կամ զուրս գրել կիտրոնի մշակությամբ և բազմացմամբ զբաղվող հատուկ պետական տնտեսություններից (Գոսսորտֆոնդ, Բուսապատման արեստ և այլն):

Աչքապատվաստ կտարարվում ե այն ժամանակ, յերբ սերմնաբույսի ցողունի ներքեւ մասը կլինի սովորական մատիտի հաստության կամ մի քիչ ավելի, այսինքն՝ մոտավորապես  $8-10$  միլիմետր արամագծով:

Աչքապատվաստը սովորաբար կտարարվում ե վաղ գարնանը կամ ամռան  $2-3$ -րդ կիսին: Գարնան աչքապատվաստի ժամանակ աչքը (բողբոշը) նույն տարին աճում—շիվ և զցում, դրա համար ել այս ձեւը կոչվում ե «աճող» աչքով աչքապատվաստ:

Ամռան աչքապատվաստի ժամանակ շիվը զարգանում ե մյուս տարին, ուստի այս ձեւը կոչվում ե «քնող» աչքով աչքապատվաստ:


Աչքապատվաստի հաջողության գիտավոր պայմանը սերմնաբույսի կեղեւի լավ անջատումն է: Սովորաբար կեղեւը լավ և անշատվում գարնան՝ ապրիլ մայիս և ամռան՝ ոգոստոս ամիսներին: Պետք ե ասել, վոր ընդհանրապես աչքապատվաստ հնարավոր և կտարարել ամբողջ տարվա ընթացքում, միայն թե կեղեւը լավ անջատվի:

Աչքապատվաստի համար կտրոն մթերելու ժամանակ պետք ե հաշվի առնել վոր շիվերի վրա աչքերը հավասարաթեք չեն. աչքապատվաստի մոմենտին շիվի վերին մասում նրանք հասունացած չեն լինում, իսկ ցածրի մասում սովորաբար թույլ են նկ. 10. Աչքապատվաստի կտրոններ զարգացած լինում: Ուստի և պատվաստի համար պետք ե վերցնել պատվաստաշվի—կտրոնի միջին մասի աչքերը:

Կտրած շվի տերեւները հենց նույն ժամերին պետք ե հեռացնել այնպիս, վոր մասն միմիայն տերեւակոթունները: Պետք ե կտրել նաև կտրոնի վերին և ներքեւի ծայրերը:

Այդ ձեռվ ստացած կտրոնը մինչև աչքապատվաստ կատարելը բացոթյա թողնել չեւ կարելի, այն պետք է դնել ջրով լցրած բաժակի մեջ կամ թե պահել խոնավ շորում:

Աչքապատվաստի տեխնիկան հետեւյալն է, նախևառաջ ցողունի վրա պետք ե ընտրել աչքապատվաստի տեղը: Այդ տեղը սովորաբար պետք ե լինի հողի մակերեսից 3—5 սմ բարձրության վրա: Պատվաստի տեղը պետք ե թաց շորով մաքրել՝ ցողունին կպած հողի հատիկներն ու կեղտը հեռացնելու համար:



Նկ. 11. Դեկի կտրվածք, աչք հանելը, աչք դնելը, կապելը

Ապա աչքապատվաստի սուր դանակով ցողունի կեղեկի վրա ներքեց գեպի վեր ըստ յերկարության մոտ 2—2,5 սմ մեծությամբ կտրվածք պետք ե անել: Կտրվածքը խորը չպետք ե լինի, այլ միմիայն կեղեկի հաստության չափ. ապա կտրվածքի վրա ըստ յերկարության մոտ 1 սմ չափ հորիզոնական կտրվածք ե արվում, այնպես, վոր յերկու կտրվածքները միասին ոռւսական Տ տառի ձև ունենան: Կտրվածքը դանակի վոսկրյա ծայրով հարկավոր ե զգուշությամբ բաց անել և հետևել վորպեսզի բնափայտը չվերավորվի և ճեղքվածքի կեղելը չպատովի: Հենց այս տեղ տեղնուտեղը աչքը կտրոնից պետք ե հանել: Աչքը կտրելու համար պետք ե սկսել աչքից մեկ սմ վեր և աչքը բնափայտի փոքրիկ կտորի հետ միասին զգուշությամբ կտրել ու հանել Այդ ձեռվ հանած աչքը ձախ ձեռի յերկու մատով հարկավոր ե բռնել տերեւակոթունից և զգուշությամբ տեղափորել բացված ճեղքվածքի կեղեկի տակ:

Աչքը կեղեկի տակ տեղափորելուց հետո պետք ե ճլոպով ամուր կապել. զրա համար անհրաժեշտ ե վերցնել ճլոպի հավասար և ամուր կտոր ու ամբողջ վերքն ամուր փաթաթել այնպես, վոր աչքն ինքն ազատ մնա, վորովհետև նրանից և անելու շիվը:



Նկ. 12. Աչքապատվաստից վեր—կտրելու տեղը

Աչքապատվաստի հաջողությունը կախված է աշխատանքի արագությունից և վորակից, ուստի նախքան կիտրոնի աչքապատվաստին ձեռնարկելն անհրաժեշտ է վարժվել վորեն այլ բույսի վրա (ուռի և այլն):

10—15 որ հետո հարկավոր և պարզել՝ պատվաստը կպել է, թե վոչ: Յեթե պատվաստած աչքի վրա թողած տերևակոթունին մատով թեթե դիպչելիս հեշտությամբ ընկնում է, նշանակում է պատվաստը կպել է: Իսկ յեթե տերևակոթունը չորացել է և մատով դիպչելիս չի ընկնում, նշանակում է աչքը չի կպել և պատվաստը պիտի կրկնել: Կրկնվող պատվաստը կատարվում է առաջին անգամ կատարված պատվաստից քիչ վեր, կամ ավելի լավ և ներքեւ: Յերկրորդ անգամ՝ պատվաստը կարելի յեւ կատարել նույն բարձրության վրա, բայց սերմարույսի հակառակ կողմից:

Բունած աչքապատվաստների կապերը 10—15 որ հետո անհրաժեշտ է թուլացնել և 20—25 որ հետո՝ բոլորովին վերցնել:

Յերբ պատվաստած աչքը 6—8 ամ յերկարությամբ շիվ կտա, պատվաստած սերմարույսի աչքից վեր գտնվող մասն ամբողջովին պիտի կտրել և հեռացնել: Կարվածքը պետք է ծածկել այդու մածիկով կամ մոմով: Դրանից հետո պատվաստած աչքն սկսում է շատ արագ աճել և մեկ կամ յերկու տարի անցնելուց հետո կտրվածքի վոչ մի հետք չի մնում:

Վորպեսզի աչքից զարգացող շիվը դեպի վեր ուղիղ աճի, հարկավոր և այն կապել հողի մեջ բույսին մոտ տնկած ցցին:

Պատվաստված բույսի հետագա խնամքը կայանում է ձևավորման, ետք և աճին համեմատ պարբերաբար վերատնկման, ինչպես նաև վնասատուների գեմ պայմանական:

Այդ բոլորի մասին մենք կանդրագառնանք հետագայում՝ համապատասխան գլուխներում:

Աչքապատվաստ կարելի յեւ կատարել վոչ միայն կիտրոնի, այլև նախնջի, ցիտրոնի և ցիտրուսային այլ բույսերի վրա և ընդհանրապես բոլոր պատվաստը ծառերի տեսակների վրա:

## ԲԱՇՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՒՆԵՐՈՎ

Կիտրոնի և մյուս ցիտրուսային բույսերի՝ կտրոններով բազմացումը նախորդից ավելի պարզ է և ամենուրեք արժանի յեւ ամենաբայց տարածման, մանավանդ այն վայրերում, վորտեղ կան մեծահասակ պաղաքերով բույսեր:

Մայրացու բույսը (այն բույսը, վորից կտրոններ են վերցնում) պիտի ե բոլորովին առողջ և անպայման պտղաբերող լինի:

Առաջի պահանջը, բույսերի միանգամայն առողջ լինելու մասին, բղխում ե նրանից, վոր մայրացու բույսի բոլոր հիվանդությունները փոխանցվում են կտրոններից աճեցվող նոր բույսերին:

Յերկրորդ պահանջը, վորպեսզի բույսերը պտղաբերող լինեն, բղխում ե պտուղների վորակի ստուգման անհրաժեշտությունից, հակառակ պարագայում կրազմացվի վատ վորակի սորտը:

Կտրոնի միջոցով կարելի յեւ բազմացնել ցիտրուսային բույսերի (մանավանդ կիտրոնի) համարյա բոլոր մասերը՝ յերիտասարդ շիվերը, միամյա և յերկամյա ճյուղերը, ճյուղերի մասերը և նույնիսկ առանձին բողոքովներ ունեցող տերևները: Սակայն ավելի հին ճյուղերի արմատակալման հոմարը, սկած յերկամյա ճյուղերից, պահանջվում են հատուկ պայմաններ:

Սենեկային պայմաններում, առանց հատուկ հարմարությունների, յերիտասարդ՝ այսպես կոչված՝ կանաչ շիվերը (տվյալ սեղոնում զարգացածները) ավելի հեշտ են արմատակալում: Միամյա ճյուղերը (նախորդ տարին զարգացածները) ավելի ուշ և զժվար են արմատակալում: Գործնականում սովորաբար ոգտագործում են կանաչ՝ բնափայտը դեռևս չհասունանած շիվերը: Այլպիսի շիվերը շատ թե քիչ ճկուն են լինում (հեշտ են կանում):

Կտրոններով բազմացնելու տեխնիկան շատ պարզ է: Այն մայրացու բույսից, վորն ուզում են բազմացնել, հարկավոր և սուր գանակով, խնամքով համապատասխան ճյուղ կտրել և այնուն հետև կտրտել 8—10 ամ յերկարության կտրոնների: Կտրոնի յերկարությունը կախված է լինելու միջնադույցների մեծությունից, այսինքն՝ աչքերի մեջ յեղած տարածությունից: Ուստի և լավ և հաշվել վոչ թե սանտիմետրներով, այլ աչքերի քանակով: Կտրոնի համար բավական է 4—5 աչքը, յերեն նույնիսկ 3-ը: Արմատակալման համար նախատեսված կտրոնները համապատասխան ձևով պետք է պատրաստել այսինքն՝ յուրաքանչյուր կտրոնի վրա յեղած տերևների մակերեսը պետք է պակսեցնել յերկու անգամ, կամ տերևների կեսը հեռացնել կամ յուրաքանչյուր տերերը կիսով չափ կտրել: Բոլոր տերևներն ամբողջովին հեռացնել ինչպես հաճախ կատարվում է, չի թույլատրվում: Կտրոնը վերեկց պիտի ե կտրել անմիջապես բողբոջի վերից, իսկ ներքեցից՝ բողբոջի տակից, բայց վոչ յերբեք միջնադույցային տարածությունների մեջտեղից: Կարվածքը պետք է լինի սիրանգամայն հարթ և յեղբերին շվի կեղեկի թելեր բոլորովին չպետք է նկատվին:

Կտրոնի կտրվածքները վոչ մի մածիկով չպետք է ծածկել: Իսկ վտունի վտանգը կանխելու համար ներքեմի կտրվածքին կարելի յե փայտածուխի ծեծած փոշի ցանել: Այդ ձևով պատրաստած կտրոնը տնկում են արմատակալման համար:

Կարոններ տնկելու լավագույն ժամանակը համարվում է գարունը՝ ապրիլ, մայիս ամիսները։ Սակայն Պավլովս քաղաքի սիրողների որբնակով՝ կտրոնը կարելի յե տնկել համարյա ամբողջ տարվա ընթացքում։

Կտրոնները կարող են արմատակալել սովորական արկղի  
մեջ՝ խոնավ ավագում. բայց կտրոնների վրա արմատներ յերե-  
վալուց հետո անհրաժեշտ է նրանք վերատնկել հողով լցոված  
ծաղկամանի մեջ, փորովհետև ավագի մեջ սննդարձը նյութեր  
բոլորովին չկան:


Պավլովո քաղաքում կիրառում են կտրոնների՝ անմիջապես հենց հոգով լցված ծաղկամանի մեջ արմատակալման յեղանակը։ Այս դեպքում ամբողջ տարվա ընթացքում փոչ մի վերատնկում չի պահանջվում։ Դրա համար պետք է վերցնել 12 ոմ մեծություն ունեցող ծաղկաման (վերին լայնքը) և լավ յեռացնել այն (ախտահանել):

Ծաղկամանի հատակում պետք է գրենաժ պատրաստել վորապեսզի ջրելու ժամանակ ավելորդ ջրերը դուրս հոսեն և ողի մուտքը հեշտացվի։ Դրենաժը կատարվում է այսպես. ծաղկամանի հատակում անցք է արփում (յիթե դա չկա) և ծածկվում է խեցիի կտորով (կոտրած ծաղկամանի փոքր կտոր), ուռուցիկ մասով գեպի վեր։ Ապա նրա վրա լցնում են մի շերտ մանր քար կամ սիսեռի մեծությամբ փայտածուի։ Դրենաժային այդ շերտի հաստությունը ծաղկամանի բարձրության մեկ քառորդից ավելի չպետք է լինի։ Դրենաժային շերտի վրա պետք է փռել ափտահանված (յեռացրտծ) մամափ 1 սմ հաստության շերտ, այնուհետեւ 8-10 սմ հաստության սեահողի շերտ։ Ծաղկամանի հողը պետք է ջրել գոլ ջրով այնչափ, վոր ամրող շերտը խոնավանա. այնուհետեւ ծաղկամանը՝ պատրաստած հողով պետք է լցնել մինչև բերանը։


Պատրաստած կտրոնը պետք է տնկել ծաղկամանի միջին մասում՝ 4—5 սմ խորությամբ (այս զեպքում կտրոնի վրա հողի մակերեսից վերև պետք է մնա տերևների հետ միասին 2—3 աչքից վոչ պակաս։ Տնկած կտրոնն անհրաժեշտ է ջրել և ծածկել սովորական բաժակով, կամ ապակյա բանկայով։ Յեթե կտրոն-

ների թիվը շատ և, ծաղկամանի փոխարեն կարելի յէ հարմարեց-  
նել արկդ: Կարո՞նները տնկելուց հետո հարկավոր ե արկդի ծած-  
կել ապակիով:

Կտրոնների հաջող արմատակալման համար անհրաժեշտ ե -  
բավականաչափ խոնավություն և ջերմություն։ Դրան կարելի յե  
հասնել հաճախակի ջրելով և գոլորշիացումը պահեցներով, ուստի  
կտրոնները պետք ե ծածկել բաժակով, վորը նաև ջերմոցի դեր  
ե կատարում և պահպանում ե հողի ջերմությունը։ Արմատակալ-  
ման լավագույն տաքությունը  $20-25^{\circ}$  ջերմաստիճանն ե։ Ավելի  
ցածր ջերմաստիճանի դեպքում անմատակալումը դանդաղում է,  
իսկ  $10-12^{\circ}$ -ի դեպքում կտրոնները սովորաբար բոլորովին չեն  
արմատակալում և փչանում են (նեխում են)։ Ջերմության և  
խոնավության այդպիսի պայմաններում կտրոնը պետք ե մնա



Նկ. 13. Կարոնի արմա-  
տակալման համար պատ-  
րաստած ծաղկաման



Եկ. 14. Արմատակալած  
կտրոն

մինչև նրա լրիվ արմատակալումը: Արմատակալման արտաքին նշաններ կարող են ծառայել կտրոնի վրա նոր տերեների գարզ պայումը:

Հենց վոր կալոնը լրիվ կարմատակալիք, ծածկոցը (բաժակը, բանկան, ապակին) հարկավոր ե վերցնել:

Սակայն ծածկոցը միանդամից չպետք է վերցնել: Անհրաժեշտ և յերիտասարդ բույսն աստիճանաբար վարժեցնել թարմ ողին: Դրա համար ծածկոցը պիտի հետզետե բարձրացնել պկը՝ բում կիսով հափ, հետո որական կես ժամով վերցնել, այնուհետեւ՝

մեկ ժամով և այլն, իսկ 3—4 որ հետո բոլորովին վերցնել: Լավ արմատակալման համար պահանջվում է 20—25 որ:

Ցեթե կտրոնները տնկվել են պավի մեջ, 20—25 որ հետո նրանք պետք են վերատնկել ծաղկամանների մեջ: Իսկ յեթե կտրոնները միանգամմից տնկվել են ծաղկամանի մեջ, ապա տարվա ընթացքում վոչ մի վերատնկում չի պահանջվում:

Արմատակալած կտրոնների վերատնկման ժամանակ առանձնապես պետք են հետեւ վոր յերխուսարդ, քնքուշ, նոր կազմակերպված արմատները չվնասվեն:

Արմատակալած կտրոնները վերատնկում են նույն ձևով, ինչպես սերմնաբույսերը:

Կտրոններից աճեցրած բույսերն այլևս պատվաստի կարիք չունեն: Նրանք՝ արմատակալելուց հետո՝ սկսում են պտղաբերել յերկրորդ կամ, ծայրահեղ դեպքում, յերրորդ տարին:

Այս միջոցն իր պարզության շնորհիվ արժանի յե ամենալայն գործադրման՝ Խորհրդային Միության բոլոր շրջաններում:

## ԲՈՒՅՍԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ԾԱԼԿԱՄԱՆՆԵՐԻ

### ՅԵՎ ԿԻԱՏԱԿԱՌՆԵՐԻ ՄԵջ

Յիսրուսային բույսերը տնկելու ժամանակ նախևառաջ անհրաժեշտ են սրբել համապատասխան տեսակի աման (ծաղկաման կամ կիսատակառ): Այս դեպքում ամանի մեծությունը, ինչպես վերն ասվեց, ամբողջովին կախված է բույսի ուժեղությունից և զարգացման աստիճանից: Վոմանք կարծում են՝ ինչքան մեծ լինի ծաղկամանը կամ կիսատակառը, այնքան բույսը լավ կզարդանա: Դա բոլորովին սխալ կարծիք եւ: Այդպիսի պայմաններում շատ դժվար է կանոնավորել բույսի աճեցողությունը, և հաճախ շատ ուժեղ աճեցողության հետեանքով պտղաբերումը ձգձգվում է մի քանի տարով: Ամանը պետք է վերցնել այնպիսի մեծության, վոր բույսի արմատները սիանգամայն ազատ տեղափորվեն նրա մեջ: Տնկելու ժամանակ արմատների և ամանի պատերի նորմալ հեռավորություն կարելի յե թողնել 2—4 սմ (նայած բույսի չափին): Տնկելուց առաջ ծաղկամանի կամ կիսատակառի մեջ պետք են զրենաժ անել, ինչպես գա նշված են կտրոնների համար: Դրենաժային շերտի հաստությունը կախված է կիսատակառի խորությունից և տնկվող բույսի արմատային սիստեմի յերկարությունից: Սովորաբար այդ շերտը պատրաստ-

վում է 2—4 սմ հաստությամբ: Տնկելուց առաջ զրենաժային շերտի վրա պետք է քիչ հող լցնել վոր արմատներն անմիջականութեն չշիվեն դրենաժային շերտի հետ: Անհրաժեշտ է խնամքով ստուգել բույսերի արմատները և բոլոր վնասված (փտած, ջարդված) մասերը հեռացնել: Վորից հետո արմատային սիստեմն ընկղմել կավի լուծույթի կամ ջրի մեջ, և ապա անցնել տնկելու գործին:

Տնկելու ժամանակ պետք են հետեւ վոր բույսը տեղավորվի:



Նկ. 15. Կտրոնի տնկելը. Ա—սիալ (խոր), Բ—ուղիղ

ծաղկամանի կամ կիսատակառի ուղիղ մեջտեղը, և վորպեսզի արմատները հավասարապես փոփած լինեն: Պետք են բույսը տնկել այնպես, վոր արմատավզեկը (այն տեղը, ուր արմատը բաժանվում է ցողունից) հողի մակերեսին հավասար լինի: Ծաղկամանի մեջ արմատներն զդուշորեն և հալվասարապես փռելուց հետո, նրանց վրա հետզհետեւ պետք է հող լցնել և միաժամանակ լցրած հողն զգուշությամբ այնպես նստեցնել: Վոր արմատները չվնասվեն:

Ծաղկամանի կամ կիսատակառի մեջ հողը մինչև բերանը չպետք է լցնել, այլ մի քիչ՝ մոտ 2—3 ամ ազատ տեղ թողնել՝ ջրելու համար:

Տնկելուց անմիջապես հետո բույսն առատորեն պետք է այնքան ջրել մինչև վոր ծաղկամանի հատակի անցքով ջուրը կուսի դուրս հոսել: Յեթե տնկելու ժամանակ այս կամ այն պատճառով արմատները խիստ կտրտված են յեղել, անհրաժեշտ է թեթևակի կտրել նաև ցողունի վերին մասերը: Սովորաբար, տնկելու ժամանակ, ուժեղ աճեցողություն ունեցող շվերը պետք է կտրել նրա յերկարության կեսի չափ, իսկ թույլ շվերը բոլորվին հեռացնել: Բայց յեթե տնկելու ժամանակ արմատները չեն կտրվել, կարելի յե ցողունին ևս ձեռք չտալ:

Նոր տնկած բույսերը՝ մինչև նրանց լրիվ արմատակալումը՝ պետք է պահել ստվերում: Նորմալ պարմաններում արմատակալումը տեղի յե ունենում 3—4 շաբաթվա ընթացքում:

## ԲՈՒՅՍԵՐԻ ՎԵՐԱՏՆԿՈՒՄԸ

Բույսի աճման հետ միաժամանակ արմատային սիստեմի այնքան է մեծանում, վոր ծաղկամանը կամ կիսատակառը նրա համար նեղվածք է դառնում: Այս դեպքում բույսն սկսում է հիվանդանալ և յեթե հիվանդության պատճառները չվերացվեն, նա կարող է բոլորվին փոչնչանալ: Ուստի բույսերի վերատընկումը նրանց նորմալ զարգացման անհրաժեշտ պայմանն է:

Յերիտասարդ բույսերի վերատնկման անհրաժեշտության դեպքում պետք է կատարել այսպես կոչված՝ վերաօքում, ըստ վորում արմատային սիստեմը և հողի գունդը բոլորվին չեն խախտվում: Վերաօքում կատարվում է նաև առաջուց տնկվածն ուղղելու համար (խորը կամ սաղը): Սենյակի պայմաններում դա կարելի յե կատարել տարվա բոլոր յեղանակներին:

Վերաշրջումը կատարվում է հետեւյալ ձևով. ամբողջ ծաղկամանը լցվում է հատակով գեպի վեր և թեթևակի ծեծերով ծաղկամանի պատերին ու հատակին, կամ ծաղկամանի յեղբերին, ապա խփելով սեղանին, հանգում ե նրա ամբողջ գունդը: Այս ժամանակ գունդը ձեռքով պիտի պահել վորպեսզի հողը չցրվի: Ծաղկամանից այս ձևով հանած բույսը, առանց գունդը քանդելու, պետք է տեղափորել ավելի մեծ ամանի մեջ:

Խոշոր բույսերի վերաշրջումը, մանավանդ 25—30 սմ լայնություն ունեցող կիսատակառներից, ավելի դժվար ե: Այս դեպքում գունդը հանելուց առաջ անհրաժեշտ է հողն առատ ջըել: Այնուհետև, առանց բույսը լրջիւր, մուրճով կամ կացնի կոթով պետք է միքանի անգամ խփել կիսատակառի պատերին, վորից հետո բույսը թեքում են կողքի վրա և խփում հատակին: Սրանից հետո բունելով բույսի ցողունից, կիսատակառից—ծաղկամանից այն պետք է զգուշությամբ հանել: Յանկալի յե, վոր այս գործողությունը կատարեն յերկու հոգի, ըստվորում մեկը ձգում է



Նկ. 16. Կիտրոնի վերաշրջում

բույսը, մյուսը՝ ծաղկամանը: 40—45 սմ լայնության ծաղկամանից խոշոր բույսերը վերաշրջելու ժամանակ անպայման պետք է մասնակցեն յերկու հոգի: Բույսը հողագնդի հետ պետք է հանել շատ զգուշ, սահուն քաշել և չթափահարել, այլապես գնդի հողը կարող է ցրվել—թափել և արմատները վիրավորվել, վորը մեծ մասամբ վերջանում է բույսի փոչնչացումով: Յեթե վախ կա, կա

վոր գունդն առանց ցրելու հնարավոր չե հանել, ապա ավելի լավ ե ամբողջ կիսատակառն զգուշորեն քանդել, և այդ ձևով գունդը հանել:

Նախքան վերատնկման ձեռնարկելը նրա անհրաժեշտության մասին պետք ե հավաստիանալ Դրա համար հարկավոր ե ծաղկամանից վերցնել 3—5 սմ հաստությամբ հողի վերին շերտը և յեթե նրա յեղիներին այդ մասում արմատներ չնկատվեն, նշանակում ե վերատնկումը կարելի յե հետաձգել մյուս տարվան:

Վորպես որենք՝ վերաշրջում կատարվում ե այն ժամանակ, յերբ ծաղկամանի հողն ուժեղ չափով փաթաթվում—հյուսվում և արմատներով, վորը և վերատնկման անհրաժեշտության հատկանիշն ե հանդիսանում: Բույսի յուրաքանչյուր վերաշրջման ժա-



Նկ. 17. Արմատներով հյուսված հողի գունդը

մանակ ամանը պիտի մեծացնել բայց դա պետք ե անել հետզհետե, սովորաբար ամանը կարելի յե մեծացնել 4 սանտիմետրից վոչ ավելի (վերին լայնքը):

Հանած դունդը պետք ե նախապատրաստել վերատնկման համար: Դրա համար փոքրիկ փայտով հարկավոր ե քրքրել սուղձված արմատների ցանցը և հեռացնել հողի արտաքին՝ հյուծված շերտը (2—5 սմ հաստությամբ), վորից հետո մեծ խնամքով սուրբել արմատային սիստեմը և բոլոր թույլ հիմքանդուս ու վիրավորված արմատներն ամբողջովին հեռացնել:

Հատ ուժեղ աճող արմատները պիտի քիչ կարճացնել:

Վերատնկման համար ծաղկամանը կամ կիսատակառը նախապատրաստում են նույն ձևով, ինչպես նախնական տնկելու

ժամանակ: Անցքը ծածկվում է խեցիի կտորով, հատակին լցնում են 2—5 սմ հաստությամբ ավազի շերտ, իսկ նրա վրա՝ հողի շերտ: Վերատնկման համար նախապատրաստված բույսը կիսատակառի մեջ պետք ե տեղավորել այնպես, վոր ցողունը գտնվի կիսատակառի ուղիղ մեջտեղը: Այդ ժամանակ յեթե նկատվի, վոր արմատավզիկն ավելի խորը կամ յերես և մնացել, այսինքն՝ հողի մակերեսից վերև կամ ներքե, ապա համապատասխանորեն հող պիտի լցնել կամ մի շերտ վերցնել: Բույսը կիսատակառի մեջ տեղավորելուց հետո աղատ մնացած տարածությունները հող պետք ե լցնել այնպես, վոր ծաղկամանի մեջ դատարկ տեղեր չմնան, ուստի հողն ամբողջ ժամանակ պետք ե ձեռքով կամ փայտով նստեցնել:

Հողի մակերեսը կիսատակառի վերին յեղիներից պետք ե 1—3 սմ ցածր լինի: Այդ տարածությունը, ինչպես նշվեց, անհրաժեշտ է ջրելու համար: Երա բացակայության դեպքում ջուրը յեղիներից կակսի թափել և բույսը նորմալ ջրելն անհնարին կդառնա: Վերատընկելուց հետո բույսը հարկավոր ե առատորեն ջրել, այնպես վոր ծաղկամանի ամբողջ գունդը մինչեւ հատակը թրջվի:

Վորքան մեծ և խոշոր ե բույսը, այնքան զժվար ե վերատընկելը: Ուստի շատ խոշոր բույսի համար, վորոնց վերատնկումը կապված է մեծ զժվարությունների հետ, կարելի յե բավականանալ միայն հողի վերին շերտը փոխելով: Դա վորոշ չափով փո-

նկ. 18. Հողագնդի վերապատրաստարինությունը և վերատնկումը: Հողի առաջը անկերտ համար վերին շերտի թարմացում անպայման պետք ե կատարել այն բույսերի համար, վորոնց վերատնկումն արգեն դադարեցված ե, այսինքն՝ յերբ կիսատակառի չափը հնասնի մոտավորապես 50 սմ-ի: Ուստի պիտի հողի վերին շերտը վերցնել այնչափ, մինչև վոր կնկատվեն արմատների մանր ճյուղավորությունները (սակայն հողը մեկ յերրորդից ավելի խորը չի կարելի վերցնել): Վերցրած

հողի փոխարեն անհրաժեշտ ե լցնել թարմ հող, իսկ ավելի լավ ե փտահող կամ բոլորվին քայլայլած գոմաղբ: Հողը վոչ մի դեպքում չի թույլատրվում փոխարինել թարմ, մանավանդ ձիռ գոմաղբով:

Ավելի փոքր բույսերի համար չի կարելի բավարարվել միայն հողի թարմացումով, քանի վոր նրանց վերատնկումը հեշտ և կդալիորեն լավ արդյունք և տալիս:

## ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Ցիտրուսային բույսերը, նույնիսկ բացոթյա աճողները, ամեն տարի մեծ կարիք են զգում պարարտացման: Այստեղից հասկանալի յե, վոր ծաղկամանների կամ կիսատակառների մեջ աճեցրած բույսերի պարարտանյութերի պահանջն ավելի մեծ և, վորովհետեւ նրանց համար հողից սննդանյութեր ստանալու հնարավորությունը սահմանափակված է, ծաղկամանի մեծությամբ: Շատ սիրողների մոտ գտնված բույսերի հիվանդու տեսքի և թույլ աճեցողության հիմնական պատճառներից մեկը բույսի բավականաչափ սննդարար նյութեր չստանալն է:

Անհրաժեշտ և նկատի ունենալ վոր կիսատակառի հողի թարմացմբ կամ վերատնկմամբ չի կարելի ապահովել բույսի նորմալ սնունդը, իսկ յեթե ավելացնենք նաև այն, վոր շատ սննդանյութեր ջրելու ժամանակ ջուրը քշում, տանում և, ապա պատկերը պարզ կլինի: Ուստի և սենյակում աճեցվող բույսերի համար պարարտացումը միանգամայն անհրաժեշտ է:

Ցիտրուսային բույսերի համար կարելի յե գործադրել թե այսպես կոչված՝ որգանական պարարտանյութերը, վորոնց թվին են պատկանում գոմաղբն ու հավի ծերտը և թե հանքային պարարտանյութերը՝ ազոտային, ֆոսֆորային և կալիական աղերը: Պարարտանյութերի բոլոր տեսակները, թե որգանական և թե հանքային, լավ ե մտցնել հեղուկ վիճակում: Պարարտացման այս ձեւի դեպքում նրանք բույսերի կողմից ավելի լավ են ոգտագործվում, և արմատները չեն այրվում, վոր հաճախ տեղի յե ունենում պարարտանյութերը չոր վիճակում մտցնելու դեպքերում (վերջինս վերաբերում է գլխավորապես հանքային պարարտանյութերին):

Նորմալ պայմաններում (ժամանակին կատարված վերատընկան դեպքում) պարարտանյութերը պետք է մտցնել պտղաբերման

հետ միատեղ: Իսկ առաջին յերկու տարիները՝ լավ սննդարար հող լինելու դեպքում՝ բույսերը միանգամայն ազատորեն կարող են ապրել առանց պարարտանյութերի:

Հանգային պարարտանյութերի գործադրման ժամանակ անհրաժեշտ և հիշել վոր ազոտային պարարտանյութերը՝ սելիտրա, ծմբաթթվային ամոնիում, ցիտրուսային բույսերի, առանձնապես կիտրոնի համար ամենաանհրաժեշտ պարարտանյութն էն, վորովհետեւ նրանք նպաստում են բույսի լավ աճման և պտղատու բողբոջների կազմակերպման: Սակայն մեծ չափով ազոտային պարարտանյութ գործադրելու դեպքում բույսերն ավելի ուժեղ են աճում և յերկար ժամանակ չեն պտղաբերման:

Դասության պարարտանյութերը (սուպերֆոսֆատ, թումասըլակ, վուկրալյուր, ֆոսֆորիտ) նպաստում են լավ պտղաբերման և արագացնում են պտղուղների հասունացումը:

Կալիական պարարտանյութերը (սելիտինիտ, քլորական բարի, մոխիր) նպաստում են բնափայտի փայտացմանը, ինչպես նաև ազոտի և ֆոսֆորի լավ յուրացմանը:

Լավ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է բույսին տակ, այսպես կոչված՝ լրիվ պարարտացում, այսինքն՝ այնպիսի պարարտացում, վորի մեջ մտնելին թե ազոտային, թե ֆոսֆորային և թե կալիական աղերը:

Լրիվ պարարտանյութ պատրաստելու համար պետք է մի լիտր/ջրի մեջ լուծել մեկական գրամ ծմբաթթվային ամոնիում, սուպերֆոսֆատ և կալիական աղ: Սուպերֆոսֆատը վատ և լուծվում, ուստի այն վաղորոր (մեկոր առաջ) պիտի լուծել, վորի ընթացքում մի քանի անգամ խառնել այնուհետեւ, յերբ սուպերֆոսֆատը լավ կլուծվի, հարկավոր ե այս լուծույթին ավելացնել ծմբաթթվային ամոնիումը և կալիական աղը: Յեթե հատակում նստվածքը առաջանա, լուծույթը պետք է լցնել մի այլ ամանի մեջ, իսկ այնուհետեւ արդեն նրանով բույսը ջրել:

Որգանական պարարտանյութերը նույնպես լավ և մացնել հեղուկ վիճակում: Դրա համար դույլի կամ վորեւ բանկայի մեջ նրանց մեկ յերրորդի չափով պետք է թարմ գոմաղբ լցնել (ամենից լավ և ծիռ, բայց կարելի յե նաև ոգտագործել կովի աղը և թոչունի ծերտը), հետո ամանը պիտի ջուր լցնել և այդ խառն ուրդը պահել 10—15 որ, վորի ընթացքում որական 2—3 անգամ խառնել: Պատրաստ հեղուկը պիտի լցնել մի այլ ամանի մեջ, իսկ գոմաղբի միացորդը բույսին թափեր Ստացված լու-

ծույթը շատ ուժեղ պարարտանյութ է և այդ ձեռվ գործադրել չի կարելի, նա կարող է այրել արմատները, ուստի և հարկավոր ե ջրի մեջ լուծել հետեւալ հաշվով՝ մեկ լիտր լուծույթին ավելացնել 14 լիտր ջուր:

Հեղուկ պարարտանյութով ջրելուց առաջ բույսերը պետք են ախտավես ջրել մաքուր ջրով: Դրանից հետո բույսը կարելի յե ջրել պարարտած լուծույթով այսպես, վոր գունդն ամբողջովին լավ թրջվի (վոր լուծույթն սկսի հոսել ներքեւ անցքի միջով) կուծույթով ջրելուց հետո, բույսը նորից հարկավոր և մաքուր՝ ջրով թեթև ջրել՝ աշխատելով սրսկել նաև ամբողջ բույսը:

Հանքային պարարտանյութերի լուծույթով ջրելը պետք ե սկսել գարնանը, յերբ բույսն սկսում է աճել—մարտ-ապրիլ ամիսներին, և կրկնել յուրաքանչյուր յերկու շաբաթը մեկ անգամ:

Գոմաղբային լուծույթով ջրելը կատարվում է յերկու անգամ. առաջին անգամ՝ գարնանային աճեցողության սկզբին (մարտ, ապրիլ), և յերկրորդ անգամ՝ ամառը՝ հուլիս, ոգոսառս ամիսներին:

Ընդհանրապես վորքան բույսը մեծ և քիչ անգամ ու դժվար ե վերատնկվում, այնքան հաճախ պիտի պարարտացնել: Ծանոթ լինելով առանձին տեսակի պարարտանյութերի ներդորածությանը և նրանց ազդեցությանը բույսի զարգացման վրա, կարելի յե փոխել վորեւ պարարտանյութի նորմաները, իսկ անհրաժեշտության գեղքում մտցվող պարարտանյութի կազմից այն բոլորովին հանել: Որինակ՝ հողի մեջ ազդատալին միացությունների ավելցուկի գեղքում բույսը կսկսի տալ ճյուղերի և տերևների ուժեղ աճեցողություն և բույսը քիչ կպաղաքերի, ըստվորում կիտրոնն այդպիսի գեղքերում սովորաբար տալիս ե, այսպես կոչված՝ հոռամատեր (խոշոր, ուժեղ աճող շվեր): Կալիական միացությունների ավելցուկի գեղքում կիտրոնի տերևների վրա յիրեռում են մասն գեղին ըներ. տերևների այդ հիվանդությունից թուլանում ե ամբողջ բույսը: Այսպիսի գեղքերում խառնուրդից պետք է հանել այն տեսակները, վորոնցից հողի մեջ շատ կա:

## ԲՈՒՅԵՐԸ ԶՐԵԼԸ ՅԵՎ ՄՐՄԿՈՒՄԸ

Բույսի նորմալ զարգացման համար ջուրը նույնչափ անհրաժեշտ է, ինչպես ողն ու լույսը, ուստի և անհրաժեշտ է ժամանակին ապահովել անհրաժեշտ քանակությամբ ջրով: Պետք է

աշխատել, վոր հողը միշտ թեթև խոնավություն ունենա կամ, ինչպես ասում են՝ «թարմ» վիճակում լինի, այսինքն՝ վոչ և շատ խոնավ: Յեթև հողը բավականաչափ խոնավ լինի, այն ժամանակ դրանից պատրաստված գունդը ձեռքի մեջ թեթև սեղմելու դեպքում հեշտությամբ կցըվի: Յեթև հողը բռի մեջ գունդ չի գառնում (փշրվում է), դա նշանակում է, վոր բույսը ջրի ուժեղ պահանջ է զգում, իսկ յեթև հողի գունդը սեղմելու դեպքում չի փշրվում, նշանակում է հողը շատ և խոնավ և անհրաժեշտ է չորացնել՝ վորոշ ժամանակ ջրելը դադարեցնել:

Ցուրաքանչյուր բույսի համար անհրաժեշտ ջրի ճիշտ քառակը վորոշել շատ դժվար է: Դա կախված է յեղանակից (անձրենակը վորոշել շատ դժվար է, ամպամած կամ պարզ յեղանակի), տարշվոտ, ամպամած կամ պարզ յեղանակի, շոգ և զով յեղանակի), տարշված ժամանակից, ծաղկամանի մեծությունից և բույսի տերևեակալման աստիճանից:

Անձրենու յեղանակին բաց ողում գտնվող բույսը բոլորովին ջրելու կարիք չի զգում, իսկ ամպամած և զով յեղանակին նույն բույսերն ավելի քիչ ջուր են պահանջում, քան պարզ, շոգ որերը: Վորքան ծաղկամանը մեծ է, այնքան շատ ջուր և հարկավոր:

Խիս տերևեակալմած բույսն ավելի շատ և ջուր գոլորշից նույն ավելի շատ և ջուր պահանջում, քան միջակ ու թույլ տերևեակալմածը:

Բույսի հաճախ ջրելը կախված է տարվա ժամանակից, յեղանակի դրությունից, ամանի մեծությունից, ինչպես նաև պարզացման փուլից (Փազից), որինակ՝ ծաղկում, հասունացում, պատղաբերում և այլն, և նրա ընդհանուր դրությունից:

Ամառը, չոր և շոգ յեղանակին, ցիտրուսային բույսերը պետք ե ջրել ամեն որ, իսկ յերեմն որական յերկու անգամ: Ամպամած յեղանակին ջրում են յերկու որը մեկ անգամ, կամ ավելի ուշուշ: Աշնանը և ձմեռն ավելի քիչ պիտի ջրել՝ շաբաթը մեկ անգամ: Գարշնանը պետք է ուժեղ ջրել: Համենայն գեպս յերեք չափետք և թույլ տալ վոր հողը շատ չորանա: Դա հատկապես վերաբերում է ծաղկող և պատղաբերող բույսերին, դրանից ծաղկիները և պատղեները թափում են, ըստվորում նրանք կարող են թափել նույնիսկ այն ժամանակ, յերբ հողը շատ չորանալուց հետո առատ ջրվի:

Բույսերին մեծ մաս և հասնում սիստեմատիկ ավելցուկ ջրելը: Դրա հետեւանքով հողը թթվում է և բույսն սկսում է հիփանդանալ: Հողի թթվելու նշաններն են՝ հողի թթու հոտը, ինչպես նաև տերևների գեղնելը, վոլորվելը և մատղաշ տերևների,

ծաղիկների, կոկոնների, ինչպես նաև պտուղների թափելը:  
Այդպիսի գեղքերում պետք է ծաղկամանից կամ կիսատակառից հողի գուանդը հանել և մաքրել, հեռացնել փշացած թթված հողը, իսկ անհրաժեշտության գեղքում հեռացնել ամբողջ հողը և բոլոր փտած արմատները սուր դանակով կտրել Դրանից հետո բույսը վերատնկել թարմ հողի մեջ (ցանկալի յե փոքր չափի ծաղկամանի մեջ): Այդ աշխատանքը կատարելու ժամանակ անպայման անհրաժեշտ և կտրել նաև բույսի վերերկրյա մասերը՝ նայած արմատային սիստեմի կտրելու չափին, կանգ չառնելով նույնիսկ այն բանի առաջնորդ յուրաքանչյուր բույսի վրա թողնվի միմիայն միքանի հաստ ճյուղ, յուրաքանչյուրը 2—3 աչքով:

Հողի վորողվելը և թթվելը կարող ե առաջանալ վոչ միայն շատ ջրելուց, այլև կիսատակառի հատակում զրենաժային անցքի անկանոնությունից: Դա կարելի յե հեշտ նկատել, վորովհետև ջրելու ժամանակ ջրի ավելցուկը զուրս չի հոսում: Անցքը մաքրելու համար պետք ե փայտի կտոր խրել անցքի մեջ այնպես, վոր նրան ծածկող խեցին թեթև բարձրանա:

Բացի ջրելուց, բույսի նորմալ զարգացման համար անհրաժեշտ և նրա վերերկրյա մասը սիստեմատիկորեն սրսկել ջրով: Սրսկումը պետք ե կատարել ամբողջ ամռան և աշնան ընթացքում, բույսը ջրելու հետ միաժամանակ՝ վաղ առավոտյան կամ յերեկոյան: Վոչ մի դեպքում չի կարելի ցերեկը սրսկել, մանավանդ յերբ նա գտնվում ե արևի տակ, վորովհետև հաճախ դրանից տերենների այրվածքներ են առաջանում: Ինչպես վերն առվեց, սրսկել կարելի յե մանր մաղ ունեցող ցնցուղներով կամ պուլիերիզատորներով:

Թե ջրելու, թե սրսկելու ժամանակ, տարվա վոր ժամանակին ել կատարվելիս լինի դա, անհրաժեշտ և միշտ ուշադրություն դարձնել ջրի ջերմաստիճանի վրա: Վորպես կանոն, ջուրը պետք ե ունենա շրջապատող ողի ջերմաստիճանը:

Ամառը ջրհորների և ջրմուղների ջրի ջերմաստիճանը ցածր և լինում ողի ջերմաստիճանից, ուստի և ջրելու համար ջուրը պետք ե վերցնել վաղորոք՝ 4—5 ժամ առաջ, վորպեսզի նա կարողանա տաքանալ:

Զմեռը ջուրը լավ տաքացնելու համար պետք ե պահել սենյակում կամ այն շենքում, վորտեղ գտնվում են բույսերը:

Վոչ մի գեղքում աճող բույսերը չի կարելի ջրել սառը ջրով, վառովհետև ծաղկամանի հողի և ջրի ջերմաստիճանի տարբերությունը

բավական մեծ ե լինում և հանկարծակի ցրտեցումը կանգնեցնում ե բույսի զարգացումը, նույնիսկ չորացնում ե:

Սառը ջրով սրսկել թույլատրվում է միմիայն «կարմիր սարդիկ» վնասատուի գեմ՝ վորպես պայքարի միջոց: Մյուս բոլոր գեղքերում, վորոնց թվում և այլ վնասատուների գեմ՝ պայքարելու ժամանակ, ջուրը պետք ե նախապես տաքացնել մինչև սենյակի ջերմաստիճանը:

## ՀՈՂԻ ՓԽՐԵՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՄԱՆԵԼԵՆԻ ԽՆԱՄՔԸ

Բույսի արմատները թարմ ողի մշտական հոսանքի կարիք են զգում, ուստի ծաղկամանի մեջ հողը միշտ պետք ե փուխր վիճակում պահել, վորպեսզի նրա մեջ ողը հեշտությամբ անցնի: Հաճախակի ջրելուց հողը պնդանում ե, իսկ դա վերացնելու համար մակերեսային շերալ 2—3 ամ խորությամբ պարբերաբար, շաբաթը մեկ անգամից վոչ պակաս, պիտի փխրեցնել: Ազելի խորը փխրեցնելու գեղքում (մանավանդ փոքր ծաղկամանների մեջ) արմատները կարող են վնասվել: Փխրեցնել կարելի յե սովորական փայտի կտորով:

Հողի մակերեսին մամուռ կամ բորբոս յերևալու գեղքում պետք ե նրանք անմիջապես հեռացնել Յեթե մամուռը կամ բորբոսն սկսեն հաճախակի յերեալ, առա հողի մակերեսային շերալ պիտի փխրաբինել թարմ հողով:

Ծաղկամանի և կիսատակառի կողերին յերևացող բորբոսը պետք ե պարբերաբար մաքրել: Շատ լավ կլինի ամանի արտաքին պատերը շաբաթական մեկ կամ յերկու անգամ տաք ջրով լվանալ:


## ԿԻՏՐՈՆԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԵՏԸ

Կիսատակառում մշտակվող կիտրոններն անպայման պետք ե ետել և ձևավորել այլապես նրանք շատ վատ կատարելուն: Բույսը ձևավորում են այն ավելի արդյունավետ դարձնելու և գեղցիկ տեսք տալու նպատակով, վորովհետև սենյակի պայմաններում կիտրոններն աճեցվում են վոչ միայն պտուղներ ստանալու, այլև շենքը զարգարելու համար: Պարբերական ետն անհրաժեշտ և բույսը վորոշ ձեմ պահելու և հավասարաչափ պաղաբերելու համար: Կիսատակառում գտնվող կիտրոնի բույսին կարելի յե տալ

շանկացած ձեր, բայց սենյակի պայմանների համար, հատկապես  
կտրոններով բազմացնելու դեպքում, ավելի լավ է թփի ձեր, կամ,  
ինչպես այն անվանում են՝ թփածե: Պատվաստված բույսեր մշա-  
կելու գեպքում կարելի յե տալ ծառի ձե, վորը կոչվում է բնա-  
յին ձե:

Բնային ձե ստանալու համար պետք է նախապես ստանալ  
բունը (ցողունը). նայած ցանկության և այն պայմաններին,  
վորտեղ բույսն է գտնվելու, բունը կարելի  
յե ստանալ ուղած բարձրությամբ, բայց  
այս գեպքում անհրաժեշտ և նկատի ունենալ  
վոր վորքան բարձր լինի բունը, այնքան  
յերկար ժամանակ և հարկավոր այն աճեց-  
նելու համար և այնքան ուշ կոկովի բույսի  
պաղաբերությունը: Սովորաբար ցողունն  
աճեցնում են 30—40 սմ բարձրությամբ:  
Պատվաստած կիտրոնների ձևավորման  
անհրաժեշտ ուկան աչքապատվաստից հետո:  
Դրա համար, ինչպես վերն ասվեց, աչքա-  
պատվաստից հետո աճած շիվը պետք է կա-  
պել ցցի, վորպեսզի նա ուղիղ գեպի վեր  
աճի: Բույսի վրա կողային ճյուղեր յերկա-  
լու գեպքում հարկավոր և նրանք ժամանա-  
կավորապես թողնել աղտորեն աճելու,  
վորպեսզի բույսն ամբողջությամբ լավ զար-  
գանա: Սակայն, յեթե նրանք իրենց աճով  
համար մ են զլխավոր (կենարոնական) շվի  
աճին, պետք է յեզունզով նրանց ծայրերը  
կտրել (ծերասել): Յերբ կենարոնական շիվը  
կհասնի 50—60 սմ բարձրության և բավա-  
կան կամրանա, 30—40 սմ բարձրության  
վրա կարելի յե ձևավորել կողային ճյուղերը,  
վորոնք կկազմեն ծառի սաղարթը:

Դրա համար 30—40 սմ ցած աճող բո-  
լոր ճյուղերը հիմքից պետք է կտրել: Մնա-  
ցած ճյուղերից ընտրում են զանազան կող-  
մեր ուղղված մոտավորապես 3—5 հատ՝ հետագա սաղարթի հա-  
մար, վորոնք պետք է թողնել առանց ետի, իսկ մյուսները հիմ-  
քից կտրել: Հետագայում պետք է հետևել վորպեսզի թողած



Նկ. 19. Աչքապատվաս-  
տից հետո աճած շիվը,  
վոր կապած և ցցին



Նկ. 20. Լավ ձևավորված կիտրոն



Նկ. 21. Վահանակիրները մտնութինի տերեների վրա

Ճյուղերն աճեն ցանկալի ուղղությամբ: Յեթև ճյուղերից վորեա  
մեկն սկսում եւ ուժեղ չափով աճել և մյուսներից անցնել հար-  
կավոր և ծերատել՝ այն թուլացնելու և մյուսներն ուժեղացնելու  
համար: Հետագայում միշտ պետք է հետեւ վորպեսզի ճյուղերը  
հավասարաշափ զարդանան և ծառի ձեր միշտ պահպանվի: Դեպի  
սաղարթի ներսն ուղղված բոլոր ուժեղ աճող հյուղերը, վորոնք  
կարող են սաղարթը խտացնել, հարկավոր և կտրել:

Թիմաձեւ բույս ստանալու համար կենտրոնական շեվը 18—20  
սմ յերկարության հասնելուն պես պետք է ծերատել, վորի հե-  
տևանքով կողային շիվեր են առաջանում: Կողային շեվերից  
պիտի ընտրել ամենազարգացած և հավասարապես դասավորված  
3 ճյուղ, իսկ մյուսները կտրել:

Մեկ տարուց հետո այդ յերեք շիվը նորից պիտի ծերատել և նրանց վրա աճող կողային շիվերից թողնել միմիայն յերկուական հատ—ամենալավերը, առողջները։ Այսպիսով ստացվում է արգեն վեց ճյուղ, վորից հետո բույն այլևս չի ծերատվում և ձեւավորումը կարելի յե ավարտված համարիլ։ Հետազոտմ հարկավոր է միմիայն հետեւ վորպեսզի ստեղծած ձեւը պահպանվի։

Հնդհանրապես ձեւվորման ժամանակ պետք է աշխատել,  
վորքան կարելի յե, բույսը քիչ կտրել Ամենից լավ և բույսը  
ձեւվորել շվերի աճի ժամանակ նրանք ծերատելով։ Հետագայում  
բույսի ետը կայանալու յե գլխավորապես սաղարթի ձյուղերը  
նոսրացնելու մեջ։ Այս գեղաքում պիտի կտրել բոլոր թույլ շիվերը,  
ինչպես նաև այն ձյուղերը, մանավանդ միշտն մասում, վորոնք  
խտացնում են սաղարթը։ Բացի սաղարթի նոսրացումից, կիտ-  
րոնը պետք է ետել նաև պաղաքերման համար, այլապես նա վատ  
կպտղարերի։

Կալուպաւուր:

Կիտրոնի ետի նպատակն և հնարքավորին չափ շատ կարճ շվեր (15—20 սմ յերկարությամբ) առաջացնել, վորոնք պտղաբերելու յեն իրենց առաջանալու հաջորդ տարին։ Այդ նպատակին համապատասխան է ամառը բոլոր ուժեղ աճող ճյուղերը պետք են հանելու համար բոլոր ուժեղ աճող ճյուղերը պետք են հանել համապատասխան մեկ յերբորդի կամ կեսի չափով, նայած աճի սրանց յերկարության մեկ յերբորդի կամ կեսի չափով, ուժով այդպիսի ուժեղությանը։ Ըստհանրապես չպետք է թույլ տալ վոր այդպիսի

ուժեղ շվեր առաջանան: Աձի ժամանակ ուժեղ զարգացող շվերի ծերատումը նպաստում է նրանց վոչնչացմանը:

Վորովինետի կիտրոնը համարյա թե հանգստի շրջան չունի, ուստի ծերատել կարելի յե ամբողջ տարվա ընթացքում: Տարեկան մեկ անգամ պետք է կտրել արդեն պտղարերած շվերը, վորովինետի նրանք, միևնույն ե, հաջորդ տարին պտուղները չեն տալու, և միմիայն խտացնելու յեն սաղարթը: Միաժամանակ պիտի կտրել բոլոր թույլ, ճգված և ծոված ճյուղերը, վորոնք չեն պտղարերելու, կամ թե կարող են մանր, տփեղ, ցածրաթեք պտուղներ տալ:

Պտղաբերելու համար ետք պետք է սկսել բույսի կյանքի յերրորդ տարուց, կամ թե առաջին պտղաբերման հետեւյալ տարին:

Նուրացման և ետի բոլոր ոպերացիաները կատարվում են վաղ գարնանը (ապրիլ-մայիս), իսկ ծերատումը՝ ամբողջ տարվա ընթացքում:

Մենյակի պայմաններում, առաջին պտղաբերումից 8—10 տարի անց յերիտասարդ ճյուղերի առաջացումը դանդաղում է, իսկ հին, արդեն պտղաբերած ճյուղերը մնոնում են: Այդպիսի բույսերը շատ թույլ են սուղաբերում: Վորպեսդի նրանք նորից սկսեն լավ աճել և պտղաբերել, հարկավոր ե բույսը յերիտասարդացնել վերի համար բույր մանր ճյուղերն ամբողջովին կտրվում են, իսկ խոշորներն ետքում են իրենց յերկարության կեսի, կամ յերկու յերրորդի չափով: Այս գեպքում բույսի մեջ սննդանյութերի տեղափոխության համար նրա վրա վիչ քանակությամբ՝ տերեներով ճյուղեր պետք ե թողնել: Այդպիսի ետից հետո բույսը պետք է տեղափոխել ավելի սննդարար հող ունեցող ծաղկամանի մեջ: Բույսը պետք ե յերիտասարդացնել վաղ գարնանը:

## ԿԻՏՐՈՆՆԵՐԻ ԲԵՐՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Ճյուղերով աճեցված կիտրոնները շատ վաղ են պտղաբերում, յերբեմն նույնիսկ ճյուղի արմատակալման առաջին կամ յերկրորդ տարին, իսկ յերրորդ տարին, վորպես կանոն, առատ ծաղկում և պտղաբերում են:

Շատ սիրողներ բոլորովին հաշվի չառներով բույսի հասակը և նրա դրությունը, առաջին ծաղկիները—պտուղները յերեալիս ամբողջովին թողնում են: Այդպիսի բան չպետք է թույլ տալ, վորովինետի պտուղների մեծ քանակը յերիտասարդ բույսն ուժեղ:

Համարվ հյուծում ե: Կտրոնի արմատակալման առաջին և յերկրորդ տարին կիտրոնի բույսի վրա յերկացող բոլոր ծաղկիները պետք է պոկել, յերրորդ տարին արդեն կարելի յե թողնել 6—8 ծաղկի, իսկ յեթե նրանք բոլորն ել պտուղ բռնեն, ապա նրանցից հարկավոր ե թողնել 2—3 հատից վոչ ավելի, բայց ամենից լավ ե այդ պտուղներն ել չթողնել և համբերություն ունենալ մեկ տարի ևս սպասելու: Չորրորդ տարին արդեն կարելի յե թույլ տալ ազատորեն ծաղկելու, բայց պահել 6—7 նոր կազմակերպված պտղից վոչ ավելի: Դրա համար պետք ե ընտրել և պահել ամենալավ զարգացած պտուղները, իսկ մնացած բոլորը պոկել Առաջին հերթին պոկում են թույլ իրար շատ մոտ գտնված թույլ զարգացած շվերի վրա յեղած պտուղները:

Այդպիսի նորմավորման ժամանակ ստացվում են ավելի խոշոր և բարձր վորակի պտուղներ, բույսն ել նորմալ կերպով զարգանում ե: Հետագայում նորմավորումը կատարվում է ամեն տարի:

Ծաղկելուց 2—3 շաբաթ հետո, նայած բույսի հասակին և անցյողության ուժին, չտարվելով պտուղների առատությամբ, անհրաժեշտ ե նրանք նոսրացնել՝ թողնելով այնքան պտուղ, վոր բույսը կարող է սնել և զարգացնել հակառակ պարագայում կատացվեն մանր պտուղներ, իսկ ինքը բույսն ել շատ կհյուծվի: Հեղադայում, բույսը մեծանալուն զուգընթաց, խոշոր և լավորակ պտուղներ ստանալու համար, բոլոր կազմակերպված պտուղներն ամբողջությամբ չպետք է պահել այլ կիսով չափ, մնացածը պոկել:

## ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ

### ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Մենյակի պայմաններում ցիտրուսային բույսերի վրա ամենից հաճախ պատահում են զանազան տեսակ վահանակիրենք: Դրանք միջատներ են, թեկուզ և իրենց արտաքին տեսքով միջատների նման չեն: Վահանակիրենքը մարմինի վերելից ծածկված են մուգ գարչնագույն կամ նարնջաղեղնագույն գույնի վահանիկով: Առանց բացառության բոլոր վահանակիրենքն անշարժ են և սովորաբար տեղավորված են լինում տերեների ներքեւ մասում, յերիտասարդ ճյուղերի և նույնիսկ պտուղների վրա: Վահանակիրենքը ծածկված է ծծում են բույսի հյութը և այն խիստ թուլացնում են:

Վահանակիրները բազմանում են շատ արագ: Նրանք տարեկան տալիս են 2—3 սերունդ և յեթե նրանց յերեալուն պես պայքարի շտապ միջոցներ ձեռք չառնվեն, բույսը կարող է բուրողին վոչչանալ: Վահանակիրների դեմ պայքարում են յուղասապնային եմուլսիա կամ անարտղին սուլֆատ կոչված բուժանյութը սրսկելով: Յեթե պատրաստ յուղասապնային եմուլսիա հնարավոր չե ձեռք բերել, կարող եք պատրաստել ինքներդ: Պետք է վերցնել 4 կղային մաս տրանսֆորմատորի յուղ և մեկ մաս կանաչ սապոն: Սապոնը յուղի հետ պետք է քիչ ջրի մեջ այնպես տրոբել վոր խառնուրդից ստացվի թանձր փրփրակալած զանգված: Ստացված զանգվածը պիտի խառնել ջրի հետ՝ խառնուրդ պատրաստելու համար վերցրած յուղի յուրաքանչյուր 20 գրամին մեկ լիտր ջրի հաշվով: Ստացած խառնուրդով կարելի յե բույսը սրսկել:

Ինչպես վերը մատնանշվեց, քիչ քանակի բույսերը պետք է սրսկել պուրվերիզատորով, իսկ մեծ քանակությամբ բույսեր ունենալու դեպքում՝ հատուկ սրսկիչ մեքենայով: Այդ ժամանակ պետք է հետեւ վրապեսի բույսը սրսկված լինի բոլոր կողմերից, ինչպես նաև ճյուղերի արանքները, մանավանդ տերեների ցածի կողմերը:

Նարինջները յուղով չպետք է սրսկել նրանց կարելի յև միւմիւյն կանաչ սապոնի լուծույթ սրսկել:

Անաբազին սուլֆատի լուծույթ պատրաստելու համար պետք է վերցնել 4 լիտր ջուր, մեկ գրամ անարազին սուլֆատ և 16 գրամ կանաչ սապոն: Սապոնը ջրի մեջ լուծելուց հետո պետք է նրա վրա պիելացնել անարազին սուլֆատը:

Ալրու վահանակիրները գտնվում են տերեների, ցողունի և պտուղների վրա: Սովորական վահանակիրներից տարբերվում են շարժուությամբ՝ իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Կարմիր տիզ.— Բացի վահանակիրներից ցիտրուսային բույսերին սենյակի պայմաններում վնասում են նաև կարմիր տիզ վնասառուն: Կարմիր տիզը կամ կարմիր սարցիկը պատահում են սենյակի համարյա բոլոր բույսերի վրա, դրանք աչքով հաղիվ նկատելի սարդիկներ են, վորոնք նստած են տերեների ցածի կողմի վրա և իրենց հետեւ սպիտակ կիտերի ձեռք հետքեր են թողնում: Տղից ուժեղ վնասված տերեները դեղնում և թափում են: Կարմիր տիզերի դեմ պայքարի միջոցները նույնն են, ինչ վոր վահանակիրների դեմ: Սրանց դեմ կարելի յե գործադրել նույնական ծծմբությունը:

Վոշոտում, բայց ծծմբի հոտը սենյակի համար շատ անախործ է, ուստի ավելի լավ և պայքարել յուղասապնային եմուլսիայով: Կարմիր տղի դեմ կարելի յե գործադրել նույնպես տերեները սառը ջրով լվանալու և սրսկելու միջոցը:

Պետք են նկատել վոր ընդհանրապես եմուլսիաներով սրսկելը բացասաբար և ազգում բուկսի վրա, ուստի այն հաճախ գործադրել չի կարելի, այլ այդ միջոցին պետք է դիմել միմիայն բույսի ուժեղ վարակվածության դեպքում, տարեկան 2—3 անգամից վոչ ավելի: Մըսկման լավագույն ժամանակը համարվում է ձմեռը:

Վորպես պայքարի միջոց, սենյակի պայմաններում՝ միանգամայն հնարավոր ե գործադրել վնասառուների՝ ձեռքով հավաքումը: Սակայն ձեռքով հավաքելու դեպքում՝ ամենամանը, հասարակ աչքով հազիվ տեսանելի միջատները մնում են բույսի վրա, վորոնք հետագայում մեծանում են և նորից բազմանում, ուստի անհրաժեշտ ե ամբողջ ժամանակ հետեւ, և թույլ շտալ վնասառուներին ուժեղ բազմանալ:

Ավելի հեշտ ե կանխել վնասառուների և հիվանդությունների յերեալը, քան թե հետագայում նրանց դեմ պայքարելը: Վնասառուների առաջ գալու դեմ նախազգուշական միջոցների կիրառման անհրաժեշտ պայման հանդիսանում է ժամանակին տարված խնամքը (վոռոգում, պարարտացում, վերատնկում և այլն): Վնասառուներ յերեալուն պես նրանց դեմ պայքարը պետք է սկսել անմիջապես:

Հիվանդություններ.— Ցիտրուսների վրա ամենատարածված հիվանդությունը այսպես կոչված՝ գոմոզը կամ խեժահօսությունն է: Խեժահօսությունը՝ բույսի ցողունից կամ ճյուղերից հեղուկի՝ խեժի՝ արտահօսությունն է, վոր ողի մեջ սոսնձի նման պնդանում է: Խեժահօսության դեմ պայքարելը բավական դժվար է:

Յեթե խեժահօսությունը լինում է ցողունի կամ հիմնական ճյուղերի վրա, ապա անհրաժեշտ ե ամբողջ վարակված մասը մինչև առողջ տեղը կարել իսկ վերքն անմիջապես ախտահանել պղնձարջասպի լուծույթով (մեկ լիտր ջրին 50 գրամ պղնձարջասպ), իսկ հետո ծածկել յուղաներկով կամ մածիկով:

Յեթե խեժահօսությունը՝ նկատվի արմատավզիկի մոտ կամ պատվաստի տեղից ցած, ապա կեղեկ մասնակի վարակման դեպքում պետք է կարել հիվանդությունը կեղերը ու բնափայտը: Իսկ յեթե

հիվանդությունը զարգացել և ողակաձև (ցողունի շուրջը), բույսը  
պետք ե վոչնչացած համարել և անմիջապես այրել:

Վարակված ճյուղերն ու կեղեփ մասերը կարելուց հետո ան-  
միջապես պիտի այրել, իսկ այն գործիքները, վորոնցով կտրել  
են, պետք ե ֆորմալինով ախտահանել:

Մրու սունկ.— Մրու հիվանդությունը, վոր հաճախ պատա-  
հում ե տերեների, ճյուղերի և պտուղների վրա, մրու սունկ  
կոչված հիվանդությունն է, վոր կազմում ե սև փառ: Այս սունկը  
բույսի վրա յերևան ե գալիս բացառապես այն գեղքում միայն,  
յերբ բույսն ուժեղ չափով վարակված ե լինում վահանակիր  
վասասառով՝ բնակվելով նրա քաղցր արտաթորությունների  
վրա: Սունկն անուղղակի վնաս ե պատճառում, փառով ծածկելով  
տերեները՝ զրանով գժվարացնում ե բույսի շնչառությունը: Այդ  
սունկի զարգացումը կանխելու համար պետք ե խնամքով պայ-  
քարել վահանակիրների դեմ: Վահանակիրների վոչնչացումով  
կվերանան նաև այդ սնկերը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . .	3
Ճիտրուսային բույսերի տեսակների և փոփոխակների ընտրու- թյունը սենեկային մշակության համար . . . . .	7
Կիտրոնի լավագույն սորտերը . . . . .	8
Սենյակում բույսերն ինչպես դասավորել . . . . .	13
Ամառը բացովիյա պայմաններում բույսերն ինչպես պահել .	14
Ճիտրուսային բույսերի սենեկային մշակության համար ան- հրաժեշտ ինվենտարը և ամանեղենը . . . . .	16
Կիսատակառային մշակության համար հող պատրաստել . .	18
Ճիտրուսային բույսերի բազմացումը . . . . .	20
Բազմացումը կտրոններով . . . . .	26
Բույսերի տնկումը ծաղկամանների և կիսատակառների մեջ	30
Բույսերի վերատնկումը . . . . .	32
Պարարտանյութերի գործադրումը . . . . .	36
Բույսերը ջրելը և սրսկումը . . . . .	38
Հողի փխրեցումը և ամանեղենի խնամքը . . . . .	41
Կիտրոնի ձեռագորումը և հարը . . . . .	41
Կիտրոնների բերքի նորմագորումը . . . . .	46
Պայքար վասասառուների և հիվանդությունների դեմ . .	47

Թարգմանեց՝ Լ. Ռհանյան

Տեխ-Խմբագիր և սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Գլավիաթ լիազոր № 1170

Հրատար. 417, տիրաժ 1500, պատկեր 327

Հանձնված է արտադրության 1937 թ. ապրիլի 3-ին

Սռորագրված է տպագրության 1937 թ. ապրիլի 19-ին

Գյուղհեռատի տպարան, Յերևան, Նալբանդյան, № 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0936007

27 АПР 1937

11

26968



Наркомзем Арм. ССР

М. Капдинель, А. Зарецкий

Комнатная культура  
ЛИМОНОВ